

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎ ԵՎ ԱՅՍՕՐ

Պատմական ակնարկ եկեղեցու մասին

Էվալդ Ֆրանկ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս գրքույկի նպատակն է նոր լիցք հաղորդել ընթերցողներին: Մեր նպատակն է այնպես անել, որ ամեն մարդ ուշադիր լինի, որպեսզի այս թեմայի վերաբերյալ ամեն բան պարզ դառնա նրա համար: Իրենց լռությամբ շատերը մեծ մեղք են վերցրել իրենց վրա, բայց մյուս կողմից, նա, ով իր խոսքերով և գրածներով հեռանում է ընդհանուր միտումներից, վատ տպավորություն է թողնում: Համենայն դեպս, հնարավոր չէ բոլորին հաճելի լինել:

Այսօրվա սերունդը պատասխանատու չէ անցյալում անընդհատ կրկնված սխալների համար: Այդ պատճառով ոչ ոք չպետք է կարծի, որ մեղադրանքներն անձամբ իրեն են ուղղված: Եթե եկեղեցու պատմության մեջ եղած սխալների զարգացումը ցույց է տրվում, դա քննադատելու համար չի արվում, այլ հանուն ճշմարտության հանդեպ սիրո: Կարդալով այս գրքույկը՝ յուրաքանչյուրը պետք է տեսնի այն բարի մտադրությունները, որոնք ներշնչել են այն, նաև իրեն պարզված օգնության ձեռքը:

Մենք հավատում ենք, որ ողջ կրոնական աշխարհը համոզված է, որ սովորեցնում և գործում է ճշմարիտ ձևով: Բոլորը ջանում են կատարել Աստծո կամքը: Մինչդեռ ոչ ոք չի դրել նրանց աչքերի առջև այն փաստը, որ լիովին շեղվել են սկզբնական քարոզչությունից և գործերից: Այսօր մնացել են միայն սովորույթներ և ավանդույթներ, որոնք ոչ մի սուրբգրային հիմք չունեն:

Նրանք կորցրել են հոգևոր կողմնորոշումը, և մարդիկ սխալ առաջնորդություն են ստանում: Ջերմեռանդությունն ու նվիրվածությունը կան բոլոր կրոններում, բայց ինչպիսին էլ լինեն մարդկային ջանքերը, բավական չեն Աստծո առաջ շնորհք գտնելու համար:

Այս կարճ ներածության մեջ որոշ թեմաներ միայն թեթևակի կշռափվեն և կքննարկվեն շատ համառոտ կերպով: Հետագա հրատարակություններում ավելի խորությամբ կթափանցենք հիմնարար վարդապետությունների և թեմաների մեջ: Արդի զարգացումները նույնպես կլուսաբանվեն աստվածաշնչային մարգարեությունների լուսի տակ:

Կրեֆելդ

1985, գարուն Հեղինակ

Ո՞ՐՆԷՃՇՄԱՐԻՏԿՐՈՆԸ

Այստեղ ուզում ենք քննարկել գոյություն ունեցող ամենակարևոր թեման: Ըստ էության դա պետք է հետաքրքրեր ամեն մարդու: Անտարբերությունը կարող է ճակատագրական լինել: Ամեն մարդ գիտի, որ տարբեր կրոններ կան: Բայց հարցը հետևյալն է՝ արդյո՞ք կան ճշմարիտ կրոններ: Բոլորը կարծում են, որ ճշմարտության մեջ են: Մինչդեռ բնական է, որ կրոնի հանդեպ թերահավատությունն այդպես աճում է: Մարդիկ հրաժարվում են կրոնական դավանանքներից և չեն ուզում ոչ մի գործ ունենալ Աստծո հետ: Հաճախ նույնիսկ նույնացնում են Աստծուն և կրոնը: Մինչդեռ կան մարդիկ, որոնք այդ բաների մասին մտածում են լռությամբ և իրենք իրենց հարցնում են, թե արդյո՞ք կա կենդանի Աստված, որ հոգ է տանում մարդկանց համար: Բայց ինչպե՞ս գտնել ճանապարհը բոլոր այս կրոնական ճյուղավորումների մեջ: Ո՞վ կարող է տրված հարցին դրական պատասխան տալ: Իսկ գուցե այս ամենը խաբեություն է: Արդյո՞ք հինդուիստներն են իրավացի: Կամ մուսուլմաններ՞ը, կամ էլ բուդդայականներ՞ը: Կրոնի հիմնադիրներից որևէ մեկը հարություն առե՞լ է: Մինչև այսօր մարդկությունը լսել է միայն Մեկի հարության մասին: Բոլոր մյուսները թաղվեցին իրենց ուսմունքների հետ:

Ճշմարտությունը կարող է գալ միայն ճշմարիտից: Արդյո՞ք Նա երբևէ կրոն է հիմնել: Եթե այո՝ ե՞րբ և որտե՞ղ: Ո՞րն է այդ կրոնը: Եթե ոչ՝ ուրեմն ոչ մի կրոն չի կարող վկայակոչել Նրան: Ամեն մարդ միայն կարող է մոլորվել և իրականում, մոլորվում է: Այդ պատճառով մենք չենք կարող մեր հույսը դնել ո՛չ կրոնի հիմնադիրների, ո՛չ հոգևոր իշխանների, ո՛չ էլ մեզ վրա: Բացի աշխարհում ճանաչված կրոններից, միայն քրիստոնեության մեջ կան մի քանի հարյուր եկեղեցական միություններ: Նրանցից յուրաքանչյուրն ունի հատուկ վարդապետություն և իր անդամներին փրկություն է առաջարկում իր սեփական ձևով: Բնականաբար այդ կրոնական հաստատություններից ոչ մեկը մարդկանց միտումնավոր մոլորության մեջ չի տանում: Մինչդեռ այն փաստը, որ կան այնքան շատ կրոնական ուղղություններ, մեզ խորհելու առիթ է տալիս:

Ամեն մարդ, որ ուզում է հասնել նպատակին, պետք է ճանապարհ ընկնի: Բայց ինչպե՞ս գտնենք այն ճանապարհը, որը մեզ հուսալիորեն կհասցնի նպատակին: Ինչպե՞ս գտնենք այն ճշմարտությունը, որին կարող ենք լիովին վստահել: Այս ողջ մարդկային խառնաշփոթության մեջ պետք է որ լինի աստվածային ուղին գտնելու հնարավորություն: Ո՞վ կարող է այս լուսավորված ժամանակաշրջանում կուրորեն

վստահել ցանկացած հավատքի: Որևէ բան աստվածային հռչակելը բավական չէ. դա պետք է վերևից հաստատված լինի: Ամեն մարդ պետք է օգտագործի հոգևոր կողմնորոշում ստանալու իր իրավունքը: Չէ՞ որ խոսքը ավելի մեծ բանի մասին է, քան այս կարծ երկրային կյանքն է:

Մենք նախասահմանված ենք երկնային Հոր հետ հաղորդակցություն ունենալու: Կա ոչ միայն ժամանակավոր, այլև հավիտենական կյանք: Ինչպես, որ հաստատ է, որ կա ֆիզիկական մարմին, նույնքան հաստատ է, որ կա հոգևոր մարմին: Ինչպես, որ ակնհայտ է, որ կյանք կա երկրի վրա, ակնհայտ է նաև, որ կյանք կա երկնքում: Նույն Աստվածն է ստեղծել երկինքը, երկիրը և այն ամենը, ինչ կա դրանցում: Արարչագործության վեհությունը զորավոր վկայություն է տալիս Արարչի մասին:

Շատերը կարծում են, որ որևէ եկեղեցու կամ կրոնական համայնքի պատկանելը փրկում է իրենց: Այս տեսակետը քիչ թե շատ չափով պաշտպանվում է կրոնական խմբերում: Մի՞թե բոլորը ունայն խոստումներ են տալիս:

Գերեզմանոց այցելելիս կարելի է գերեզմանաքարերի վրա կարդալ գեղեցիկ հնչող տապանագրերը. «Աստ հանգչի խաղաղությամբ...», «Երանությամբ տուն հասավ...», «Հանգչում է Աստծով...»: Թերթերում գրված մահազդերը նույնպես լավ են հնչում. «Երանությամբ ննջեց...», «Աստված տուն կանչեց...», «Վախճանվեց Հռոմի կաթոլիկ եկեղեցու սուրբ խորհուրդները ստանալուց հետո...»: Այս ամենից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ բոլոր մեռածները Տիրոջ մոտ են: Բայց ինչպե՞ս է իրականում: Մի՞թե բոլոր հեռացածները Տիրոջ հետ անձնական հարաբերություն ունենին:

Գերեզմանոցում այսպիսի մխիթարական խոսքեր են ասում ողջ մնացածներին. «Տերը հաճեց իր Թագավորությունը տանել այս եղբորը կամ քրոջը...»: Հետո եկեղեցում սգի մեջ եղողներին հանդիսավոր կերպով ասվում է, որ հեռացածները ոչ թե դրախտում են, այլ քավարանում: Մի կողմ դնելով այն փաստը, որ այդ հասկացությունը զուտ երևակայություն է և ոչ մի անգամ չի հիշատակվում Սուրբ Գրքում, պետք է լրջորեն հարց տանք՝ իմանալու համար, թե որն է ճշմարիտը: Իրականում որտե՞ղ է հիմա նա, որ հեռացավ: Հնարավո՞ր է, որ ծննդից մինչև մահ մարդկանց պահում են մոլորության մեջ, իսկ հետո միայն մխիթարում են: Կյանքի ընթացքում նրանց ասվում է, որ իրենք փրկված են, իսկ մահից հետո պարզվում է, որ նպատակին չեն հասել: Մի՞թե կրոնը ափիոն չէ մարդկանց թմրեցնելու համար մինչև

արթնացման այն ահավոր պահը:

Տարվա սկզբից մինչև վերջ նրանք ստանում են եկեղեցական խորհուրդներ, որոնք պետք է փրկեին նրանց, բայց նրանք իրականում չեն ճաշակում փրկությունը: Մանկան մկրտությունից մինչև վերջին օծումը՝ անցնելով օծման խորհրդով, նրանք պատրաստվում են փրկության համար: Եվ այդ բազում ջանքերից հետո ահա տխուր արդյունքը՝ մահացած մարդը գնաց ոչ թե վերև, այլ ներքև:

Այս ոլորտում ոչ ոք չի կարող ավելի լավ խոսել, քան բժիշկներն ու բուժքույրերը, որոնք անընդհատ մահերի ականատես են լինում: Անկախ կրոնական համայնքին պատկանելուց մի պայքար է սկսվում մահվան դեմ: Մարդիկ ընդհանրապես չգիտեն, թե ինչ հուսահատություն է համակում մահացողին: Չկա հավատքի, վստահության և ուրախության ոչ մի նշույլ: Մարդիկ, որոնք ենթադրում են, որ կատարել են Աստծո պահանջները իրենց գիտության և խղճմտանքի համաձայն, հայտնաբերում են, որ ամենևին էլ Աստծո պահանջները չեն կատարել, այլ այն, ինչ պահանջել և պարտադրել են եկեղեցիները իրենց անդամներին:

Քանի որ կյանքի և մահվան հարց է, յուրաքանչյուրը պետք է քննի ինքն իրեն: Յուրաքանչյուր մարդ՝ անկախ իր ռասայից և ազգությունից, իրավունք ունի իմանալու ճշմարտությունը Աստծո և ինքն իր մասին: Նա, ով անտարբեր չէ իր հավիտենական ապագայի հանդեպ, նույնիսկ պարտավոր է համեմատություն անելու եկեղեցու ուսմունքների, գործերի և Սուրբ Գրքի ասածի միջև: Միայն, այն ինչ Աստծուց է, տանում է Տիրոջ մոտ և կարող է կանգնել Նրա առջև: Նա, ով ասում է. «Ինձ համար մեկ է, ինձանից հետո թեկուզ ջրհեղեղ», բնավ չի հասկանում, թե ինչ է ասում: Աստվածաշունչն իրոք միակ Գիրքն է երկրի վրա, որը մեզ ծանոթացնում է Աստծո և Իր ծրագրերի հետ: Սկզբից մինչև վերջ այն պարունակում է աստվածային ծագման հաստատված փաստերը:

Մենք պետք է լրջությամբ վերաբերվենք թե՛ մեր կյանքին, թե՛ մեր մահին: Մտադիր չենք ողջ եղողներին մահվան հանդեպ վախ ներշնչել, այլ հակառակը, ուզում ենք ցույց տալ այն ճանապարհը, որը կհասցնի նպատակին: Աստծո և Իր Խոսքի հանդեպ հավատքն ու վստահությունը պետք է վերականգնվեն ամեն գնով: Աստված ճշմարիտ է, և Իր Խոսքը ամեն կասկածից վեր է: Բոլոր կրոններում վախ են ներշնչում Աստծո հանդեպ, բայց միաժամանակ շահում են նրանց վստահությունը մարդկային, կրոնական հաստատությունների նկատմամբ: Մեր առաջադրանքն է սասանել այն վստահությունը, որ

մարդիկ ունեն բոլոր կրոնների հանդեպ և նրանց մղել հավատալու Աստծո և Նրա Խոսքի ճշմարտացիությանը:

Ամենակարողը ծրագրեր է կազմել, Նա ծրագիր ունի մարդկության համար: Դժբախտաբար մարդիկ ստեղծել են իրենց սեփական ծրագրերը և Աստծո թագավորության ներսում կանգնեցրել են իրենց սեփական կրոնական թագավորությունները: Մարդկայինը ուղղակի հակադրության մեջ է աստվածայինի հետ: Նա, ով ուզում է ներգրավվել Աստծո հավիտենական խորհրդի մեջ, պետք է դուրս գա դարերի ընթացքում հնարված բոլոր կրոններից:

Ամենակարող Աստված միաժամանակ ամենագետ է և աշխարհի ստեղծումից առաջ ծրագիր է կազմել մարդկության համար: Հաղորդակցության խզումը, որը տեղի ունեցավ անհնազանդության և մեղքի միջոցով մարդկային ձախողման պատճառով, չի կարող ջնջել Նրա հավիտենական ծրագրերը: Քանի որ Տերը ամեն ինչ նախօրոք գիտեր, կարող էր դա հաշվի առնել Իր ծրագրերում: Աստծո Խոսքը նույնքան ճշմարիտ և անսխալական է, որքան Աստված Ինքը:

Աստծո ճանապարհը մարդկության հետ հստակ նկարագրված է Իր Խոսքում: Դժբախտաբար այն մթագնեց և անանցանելի դարձավ կրոնական ավանդույթների պատճառով: Եթե նույնիսկ դոգմաները հարյուրավոր կամ հազարավոր տարիների հնություն ունեն, մնում են այն, ինչ կան՝ այսինքն՝ մարդկանց կողմից ներմուծված տեսություններ և ուրիշ ոչինչ: Դոգմաները ավտոմատ կերպով ճշմարիտ չեն կարող դառնալ միայն նրա համար, որովհետև հռչակվել են կրոնական հաստատության կողմից: Այն, ինչ մարդկային է, երբեք աստվածային չի դառնա, և այն, ինչ աստվածային է, երբեք չի լինի մարդկային: Ճշմարտությունն ու սուտը բացառում են իրար: Կամ ճշմարտության հետ գործ ունենք, կամ մոլորության: Ամեն ճշմարտության աղբյուրն Աստված է, ամեն ստի հեղինակը՝ սատանան: Ամենամեծ մոլորությունը ճշմարտության սխալ պատկերումն է, և կրոնական աշխարհը լցված է դրանով: Ամեն տեսություն կամ գործ, որը ներդաշնակ չէ Սուրբ Գրքի հետ, չի կարող լինել աստվածային ծագման: Աստծո Խոսքը պարունակում է այն ամբողջական վկայությունը, որը Տերը հանձնել է մարդկությանը:

Հին Կտակարանի մարգարեները ազդարարել են Մեսիայի գալուստը և Նրանով՝ Աստծո փրկությունը, առաքյալները եղել են Փրկչի կյանքում մարգարեությունների իրականացման ականատեսները, Ավետարանի քարոզչության միջոցով աստվածային շնորհքի պարզև առաջարկվում է բոլոր մարդկանց: Յուրաքանչյուրը կարող

է հավատալ Աստծո կողմից հաստատված ճշմարտությանը: Մեծ տարբերություն կա առաջին եկեղեցու և այսօրվա քրիստոնեության միջև: Այն, ինչ կար առաջին եկեղեցուն, չկա այսօրվա եկեղեցուն, և այն, ինչ կա պաշտոնապես հաստատված քրիստոնեության մեջ, չկար սկզբնական եկեղեցուն. դա հստակ է դառնում մի համեմատության միջոցով:

Սկզբնական եկեղեցուն քարոզչությունը Սուրբ Գրքի համաձայն էր: Առաքյալները սովորել էին Տիրոջից և Սուրբ Հոգու առաջնորդության տակ էին: Նա, ով կարդում է Գործք առաքելոց գրքի առաջին գլուխները, կարող է ընդհանուր պատկերացում ստանալ առաջին եկեղեցու կյանքի վերաբերյալ: Աստծո Հոգու և օրհնությունների լիությունը ակնհայտ էր նրա մեջ: Առաջին քրիստոնյաները մեկ սիրտ, մեկ հոգի ունեին. նրանք ամեն բան բաժանում էին իրար միջև և կազմում էին Աստծո մի մեծ ընտանիք: Առաջին եկեղեցին քարացած կազմակերպություն չէր, այլ կենդանի օրգանիզմ: Մեր Տերն ասում է. «... իմ եկեղեցին կկառուցեմ, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»: Այսօր էլ Նա զբաղված է այդ գործով: Ինչպես Աստված բացահայտվեց Քրիստոսի մեջ, Քրիստոսն էլ բացահայտվում է Իր եկեղեցու միջոցով: Նույն քարոզչությունը, նույն ծառայությունը շարունակվում էին: Մեծ նշաններ և հրաշքներ էին կատարվում: Անհավատները հավատացյալ էին դառնում, դիվահարները ազատագրվում էին, հիվանդները՝ բժշկվում: Այդ ամենը այն ժամանակ դեռ ընդունելի էր, Աստծո Խոսքը միակ ճշմարիտ չափանիշն էր հավատացյալ դարձողների համար: Նրանք իրենց հույսը դնում էին Տիրոջ վրա, որին տեսել էին Իր ծառայության, չարչարանքների, մահվան և հարության մեջ: Սուրբ վախ կար նրանց մեջ Նրա ներկայությամբ, որովհետև ներկա էին եղել այդ բոլոր իրադարձություններին և հավաքվում էին Նրա Անունով:

Սկզբնական քրիստոնեության մեջ կային առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, հովիվներ և վարդապետներ (1 Կորնթ.12:28, Եփես. 4:11): Այս տարբեր ծառայությունները հաստատված էին Աստծո կողմից Իր եկեղեցուն: Այդ ծառայություններն անհրաժեշտ էին հոգևոր շինության համար և լրացնում էին մեկը մյուսին: Այն ժամանակ ոչինչ չգիտեին Պապի, կարդինալների, արքեպիսկոպոսների, վանականների և միանձնուհիների մասին: Բոլոր այն բաները, որոնք այսօրվա քրիստոնեության մեջ համարվում են ինքնին հասկանալի, այն ժամանակ զոյություն չուներին:

Աստծո կամքի համաձայն Տիրոջ եկեղեցին սկզբնապես մտահղացված էր որպես աստվածային հաստատություն: Ոչ ոք

իրավունք չուներ նրա մեջ դնել Աստվածաշնչին հակասող որևէ բան: Ճիշտ է, որ եկեղեցին բաղկացած էր տկարություններ ու թերություններ ունեցող մարդկանցից, շնորհք ստացած և Աստծո զավակներ դարձած մեղավորներից, բայց նրանց վարդապետություններն ու գործերը սկզբից մինչև վերջ պետք է համապատասխանեին Աստծո Խոսքին: Այն ամենը, ինչ չի բռնում Խոսքի քննությունը հիմա, առավել ևս չի կարող դիմանալ վերջին օրը Աստծո դատաստանի առջև: Ահա թե ինչու աստվածաշնչային հավատացյալը ոչ մի կերպ չի ընդունի մարդկանց կողմից հնարված որևէ ուսմունք: Աստծո առաջ հավատքի ճշմարիտ դավանությունը գրված չէ կատեխիզիսում, այլ միայն Սուրբ Գրքում:

Առաքյալները ոչ մի կապ չունեին «Regula veritatis»-ի հետ, որն առաջարկվել էր որպես առաքելական դավանանք: Բացի այդ սկզբում այն վերջանում էր միայն այս խոսքերով. «... եվ Սուրբ Յոզուս, սուրբ եկեղեցուն, մեղքերի թողությանը, մարմնի հարությանը: Ամեն»: Այժմ ամեն կիրակի ողջ աշխարհի տարբեր հարանվանությունների միլիոնավոր հավատացյալներ կրկնում են այս խոսքերը. «Հավատում եմ Սուրբ Յոզուս, կաթոլիկ սուրբ եկեղեցուն, սրբերի հաղորդակցությանը...»: Այս հավելումը նույնիսկ չկար հետառաքելական ժամանակներում, որոնք անմիջապես հաջորդեցին առաքյալների ժամանակներին, այլ ուրվագծվել է Նիկիայի տիեզերաժողովից հետո և համալրվել հաջորդ սինոդների ժամանակ: Այդ դավանանքին կշիռ տալու համար անհրավագիորեն վկայակոչում են առաքյալների հեղինակությանը:

Նույն բանը կատարվեց «Դիդախե» անունով գրքի հետ, որը գտել են միայն 1883 թվականին մի վանքում և կամայականորեն թվագրել առաջին դարի վերջում: Դա ոչ մի կապ չունի տասներկու առաքյալների վարդապետության հետ: Օրինակ՝ 29-րդ էջում գրված է. «Եթե քո ձեռքերի աշխատանքով դու ինչ-որ բան ես վաստակում, ինչ-որ բան պետք է տաս քո մեղքերի թողության համար»: Մի՞թե սա Ավետարան է: Առաքյալներն անձամբ ճանաչում էին Նրան, ով ներել է մեր մեղքերը: Այսօր էլ նրանք բոլոր հարցերի շուրջը կ'իտսեին այնպես, ինչպես խոսել են այն ժամանակ: Այդ ամենը գրվել է, որպեսզի մենք կարողանանք ամեն բան քննել: Ո՞վ է այսօր հետևում այս խոսքին. «Ամեն բան քննեք...»: Աստված Ինքն Իրեն չի հակասում: Նրա որոշումները կատարյալ են: Այն ամենը, ինչ հակասական է թվում, աստվածաբանների մտքի մեջ է, ոչ թե Աստծո Խոսքում:

Կրոնական ակնոցով չնայող մարդը սարսափահար պիտի լինի՝ տեսնելով, թե ինչ մեծ շեղումներ են եղել: Հավատքի սկզբնական

Ժառանգությունը փոխել են անճանաչելիության աստիճան: Բոլորովին ուրիշ ավետարան է քարոզվում:

Սրա վերաբերյալ կարելի էր մտածել. «Բավական է անկեղծ լինես և չես մեղադրվի»: Բայց անկեղծությունը չի կարող սխալը ճիշտ դարձնել: Երբ խոսքը վերաբերում է հավատքին, առաքյալների վարդապետությանն ու գործերին, դրանք չեն սովորում տիեզերաժողովների ժամանակ. ուժի մեջ է միայն այն, ինչ հասել է մեզ սկզբնական եկեղեցու միջոցով: Եկեղեցական հարցերն ու խնդիրները կարող են քննարկվել համապատասխան հանձնաժողովներում, բայց Քրիստոսի և առաքյալների վարդապետությունն ու գործերը վաղուց են հաստատված: 1521 թվականի ապրիլի 18-ին Վորմսում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ Լյութերն ասում էր. «Պատճառը, որի համար ես չեմ հավատում ո՛չ Պապին, ո՛չ տիեզերաժողովներին, այն է, որ նրանք հաճախ մոլորվել են և խճճվել իրենց սեփական հակասություններում: Եթե պարզ վկայություններով և հստակ փաստարկներով չբավարարվեմ, կհամոզվեմ Խոսքի վկայություններով, որոնք ինքս եմ մեջբերել և որոնք պահված են Սուրբ Գրքում: Ես չեմ կարող և չեմ էլ ուզում ուրանալ իմ ասածները, որովհետև խղճիմ դեմ գործելը վստահելի և փրկարար չէ: Թող Աստված օգնական լինի ինձ: Ամեն»:

Մեզ հետաքրքրում է Ամենակարող Աստծո հավիտենապես ճշմարիտ ծրագիրը մարդկության համար և համեմատությունների միջոցով ուզում ենք նպաստել դրա պարզաբանմանը: Խոսքը լիովին տարբեր և իրարից անջատ երկու բաների մասին է: Մեկը աստվածային ուղորտն է, մյուսը՝ մարդկային: Նա, ով համարում է, որ ինքն Աստծուց է, կհավատա Աստծո Խոսքին՝ առանց ուշադրություն դարձնելու տիեզերաժողովների և սինոդների որոշումներին: Աստծո Խոսքը ժամանակների փոփոխություններին ենթակա չէ. այն հավիտյան անփոփոխ է:

Պետք է, որ յուրաքանչյուր մարդ հասկանա, որ Սուրբ Գիրքն է պարունակում Աստծո վկայությունը իր ամբողջությամբ և այն վերջնական է: Աստված բացարձակապես ոչինչ չի մոռացել: Այն բանից հետո, երբ կորցրին աստվածային գիտությունը, դրան փոխարինեց մարդկայինը: Եկեղեցու պատմության ընթացքում բոլոր ընդունված որոշումները երբեք Աստծո կտակի անբաժանելի մաս չեն կազմի, որովհետև չեն պատկանում Քրիստոսի և առաքյալների սկզբնական վարդապետությանը, որը հիմնված է մարգարեական Խոսքի վրա:

Չենք կարող մեզ թույլ տալ չլսել կամ անտեսել Հին և Նոր

Կտակարանների լուրջ նախազգուշացումները: Գրված է. «Չավելացնեք այն խոսքի վրա, որ ես ձեզ պատվիրում եմ և նրանից չպակասեցնեք» (2Օրին.4:2): Հետագայում Տերն ասաց դպիրներին, որոնք չէին հասկացել Մովսեսի և մյուս մարգարեների ասածները, այլ հետևում էին իրենց սեփական մեկնություններին և ավանդույթներին. «Այս ժողովուրդն Ինձ շրթունքներով է պատվում, իսկ նրա սիրտն Ինձանից հեռացած, բաժանված է: Սակայն զուր տեղն են պաշտում ինձ՝ այնպիսի վարդապետություններ սովորեցնելով, որոնք մարդկանց պատվիրաններ են (Մարկ.7:6,7):

Հավատացյալների շատ համայնքներ բնավ ուշադրություն չեն դարձնում Աստծո խոսքին և խճճված են մարդկային վարդապետությունների մեջ, մինչդեռ հիմա ավելի քան երբևէ շատացել են կրոնական գործունեությունները: Բայց բոլոր այդ հակասուրբգրային գործերից և հռչակումներից վեր գտնվում է միշտ նույն բառը՝ «Իզուր է»: Իզուր են բոլոր ներկայացված աղոթքները, կազմակերպված պաշտամունքները, իզուր են բոլոր երգերն ու ծիսասկատարությունները, եկեղեցիների ավետարանչական մեծ արշավները և տոնակատարությունները: Ամեն բան, որ Աստծո թագավորության մեջ չի արվում Աստծո խոսքի համաձայն, Աստծո առաջ ոչ մի արժեք չունի: Այդ բազմաթիվ ծրագրերից ո՞րը Նա պետք է ընդունի: Ու՞մ կողմից պետք է լինի:

Տերը ոչ մի խառնուրդ չի հանդուրժում: Նա կամենում է, որ Իր խոսքի մաքուր սերմը պահվի սկզբնական տեսքով և ցանվի հենց այդպես: Նա հանդիմանում է կրոնական առաջնորդներին, որոնք երեկ, ինչպես և այսօր վայելում են ժողովրդի մեծ հարգանքը. «Լա՛վ է, որ Աստծո պատվիրանները անարգում եք, որ ձեր ավանդույթը պինդ պահեք» (Մարկ.7:9): Ինչ-որ բան պետք է մի կողմ դնել՝ մեկ ուրիշ բան դրա տեղը դնելու համար:

Տերն Ինքն է մեզ ուղղում այս համառ նախազգուշացումը. «Աստծո ամեն խոսքերը մաքրված են... չավելացնես Նրա խոսքերի վրա, որ միզուցե քեզ հանդիմանի, և դու ստախոս երևաս» (Առակ.30:5,6): Բոլոր նրանք, ովքեր ինչ-որ բան կավելացնեն Սուրբ Գրքի լիովին ավարտված վկայությանը Հին և Նոր Կտակարաններում, պետք է կանգնեն Աստծո առջև որպես ստախոսներ՝ Նրան հաշիվ տալու համար և կդատապարտվեն: Եղենի պարտեզից ի վեր սատանան՝ առաջին ստախոսը, ներգործում է մարդկանց վրա, որպեսզի այլ կերպ մեկնի Աստծո խոսքը: Մինչև վերջ նա կկեղծի խոսքը՝ մարդկությանը խաբելու համար: Միայն նա, ով կարող է ճանաչել նրա խորամանկ

հնարքները և փախչել նրա ազդեցությունից, կարող է գտնվել Աստծո անմիջական ազդեցության տակ, որը բխում է միայն Աստծո Խոսքից Յոզու միջոցով:

Սուրբ Յոզին ճշմարտության Յոզին է, և միայն Աստծո Խոսքն է ճշմարտության Խոսքը: Աստվածաշնչի վերջին գլխում գրված է վերջնական նախազգուշացումը. «Եթե մեկը սրանց վրա բան ավելացնի, Աստված նրա վրա կավելացնի այն պատուհասները, որոնք գրված են այս գրքում: Եվ եթե մեկն այս գրքի մարգարեության խոսքերից բան պակասեցնի, Աստված նրա բաժինը կպակասեցնի կյանքի գրքից, սուրբ քաղաքից և այս գրքում գրվածներից» (Հայտն. 22:18,19):

Ո՞վ կարող է թեթևամտորեն անտեսել այս խոսքը: Ինչպես, որ կատարվեց այն խոսքը, որը Տեր Աստված ասել էր սկզբում «Այն օրը, երբ դրանից ուտես, կմեռնես», այնպես էլ այս խոսքը կհաստատի իր ճշմարտացիությունը: Աստված մտածում է այն, ինչ ասում է և ասում է այն, ինչ մտածում է: Սուրբ Գիրքը չի կարող բեկանվել: Աստծո բոլոր որոշումներն անփոփոխ և կատարյալ են:

Վ Ե Ր Զ Ի Ն Ց Ա Ն Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաքյալը խոսում է կտակի, ժառանգության, վերջին կարգադրությունների մասին, որոնք օրենքի ուժ ստանալուց հետո չեն կարող փոխվել կամ հետագայում լրացվել հավելումներով (Գաղատ. 3:15): Մեր Տիրոջ մահով Նոր Կտակարանը ուժի մեջ մտավ: Ինչպե՞ս են մարդիկ համարձակվել ձեռնարկել բոլոր այդ փոփոխությունները: Եբր. 9-րդ գլխում մեկ անգամ էլ է խոսվում այդ իրավիճակի մասին և 16,17 համարներում ասվում է. «Որովհետև ուր որ կտակ կա, անհրաժեշտ է, որ կտակարարի մահը մեջ մտնի: Քանի որ կտակը մեռնելուց հետո է հաստատ. այն երբեք ուժ չի ունենա, քանի դեռ կտակարարը կենդանի է»:

Մարդկային ժառանգության վերաբերյալ հաճախ վեճեր են լինում: Բայց լիովին բացառվում է, որ հանգուցյալի գրավոր վերջին ցանկությունները փոխվեն. բայց հենց այդ էլ անհասկանալի կերպով կատարվեց Աստծո կտակի հետ: Մի կողմից վկայակոչում են Քրիստոսին, մյուս կողմից՝ Նրան և Իր կտակը բոլորովին ուրիշ բան են դարձրել: Այն, ինչ Նա թողել է Իրենից հետո, անուժ է դարձել, որովհետև Աստծո Խոսքի փոխարեն ավելացրել են բոլորովին օտար

մտքեր:

Ամեն եկեղեցական համայնք իրավունք ունի հավատալու և անելու այն, ինչ ուզում է: Բայց նրանք, ովքեր հավակնում են լինել կենդանի Աստծո եկեղեցին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի եկեղեցին, պետք է Աստծո Խոսքը և Քրիստոսի Կտակը ընդունեն իրենց ամբողջությամբ, այնպես, ինչպես Նա թողել է Իրենից հետո: Ուրեմն որտե՞ղ կարող են տեղ գտնել եկեղեցու պատմության ընթացքում ավելացված բոլոր այդ դոգմաներն ու ավանդույթները: Դրանք բացարձակապես չեն պատկանում այն Կտակին, որը Տերը թողել է Իրենից հետո:

Մարդկանց գիտակցության մեջ հաստատուն կերպով արմատացած է այն միտքը, որ կազմակերպված եկեղեցիները հաստատված են Աստծո կողմից և երկրի վրա պետք է սովորեցնեն և գործեն Քրիստոսի փոխարեն: Բայց մի՞թե այդպես է իրականում: Կաթոլիկական փոքր կատեխիզիսում «եկեղեցու պատվիրանները» թեմայի վերաբերյալ կարդում ենք. «Քրիստոսը եկեղեցու իշխաններին պատվիրաններ տալու իրավունք է տվել: Նա ուզում է, որ հանուն Իր հանդեպ ունեցած սիրո մենք կատարենք եկեղեցու պատվիրանները»: Ե՞րբ և որտե՞ղ է Քրիստոսը նման բան ասել: Աստծո պատվիրանները վաղուց են տրվել և պետք է ծանոթ լինեին բոլորին: Բայց դժբախտաբար մարդկությունը եկեղեցու պատվիրանները Աստծո պատվիրանների տեղ է ընդունել և այդպիսով՝ մոլորվել:

Կոնստանդինոսի ժամանակ աշխարհայնացված եկեղեցին ճանաչվեց որպես եկեղեցի: 313 թվականին Կոնստանդինոսը իր սեփական ծրագրերի համար սկսեց քաղաքական հնարքներով իր կողմը գրավել թե՛ քրիստոնեությանը, թե՛ հեթանոսությանը: Նրա դրդմամբ էր, որ հրավիրվեց Նիկիայի տիեզերաժողովը:

325 թվականից հետո նա աջակցում էր թե՛ եկեղեցիների, թե՛ հեթանոսական տաճարների կառուցմանը: Նրա իշխանության ներքո աշխարհիկ քրիստոնեությունը հաստատուն ձև ստացավ և այդպիսով, հռոմեական կայսրության ներսում դարձավ համաշխարհային հոգևոր իշխանություն: Եվսեբիոսը հանձին նրա տեսնում էր մի փրկչի, որն իրենց կազատեր խորը նեղություններից: Ներոն կայսեր ժամանակներից մինչև Դիոկղետիանոսի ժամանակները տեղի ունեցած քրիստոնյաների դաժան հալածանքներից հետո մարդիկ սկսեցին շունչ քաշել:

380 թվականին Թեոդոսիոս I-ի և Գրատիանոսի իշխանության օրոք ընդհանրապես վերջ տրվեց կրոնական ազատությանը: Մինչ

այդ դեռ կային հավատացյալների մի քանի համայնքներ, որոնք գոյություն ունեին պետության կողմից ճանաչված քրիստոնեության կողքին: Բայց այդ ժամանակվանից քաղաքացիներին պետության ուժով ստիպեցին դառնալ «հռոմեական քրիստոնյաներ»: Այդ իրադարձությունը իր գագաթնակետին հասավ Յուստինիանոսի օրոք (527-565): Եկեղեցին այնժամ դարձավ պետության կողմից ընդունված եկեղեցի, իսկ քահանաները՝ պետական գործիչներ: Հեթանոսական հռոմեական կայսրության կործանման հետ հաստատվեց Հռոմի կրոնական իշխանությունը: Դա եղավ դաժան միջնադարի սկիզբը. մոտ հազար տարի անցավ մինչև Ռեֆորմացիայի հայտնվելը: Պետության և եկեղեցու միապետությունը, որում եկեղեցին գրեթե միշտ հաղթում էր, բերեց այն բանին, որ բոլոր այլ կերպ հավատացողները հալածվում էին: Ողջ ժողովուրդներ բռնությամբ քրիստոնեացվում էին: Միլիոնավոր մարդիկ նահատակվում էին, որոնց թվում էին հարյուր հազար հրեաներ, որոնք խարանվում էին որպես «Քրիստոսին սպանողներ» և «Աստծո թշնամիներ»: Եկեղեցին դարձավ քաղաքական իշխանության գործոն:

Արդեն Քրիստոսից հետո առաջին երկու դարերի ընթացքում տարբեր հնարված վարդապետություններ ներմուծվեցին: Իսկ երրորդ դարում սկսվեց դրանց հարկադրական կիրառումը: Հավատացյալներին պահանջում էին հետևել այդ նոր վարդապետություններին և գործերին: Ներմուծվեցին խաչելության պատկերը, խաչակնքումը, մոմերն ու խունկը: Միշտ նորանոր բաներ էին ավելացվում՝ սրբերի պաշտամունքը, ամենօրյա պատարագը և ուրիշ շատ բաներ:

431 թվականին տեղի ունեցած Եփեսոսի տիեզերաժողովի ժամանակ հռչակվեց Մարիամի պաշտամունքը որպես աստվածամոր: 500 թվականին հոգևորականությունը սկսեց հագնել միանման քահանայական հագուստներ: Դրան հետևեցին տոնը կույս Մարիամի պատվին, պապի ոտքերի համբուրելը, պատկերների և մասունքների պաշտամունքը, Հովսեփի պաշտամունքը, ուրբաթ օրվա ծոմը: Քահանաների կուսակրոնության վարդապետությունը ներմուծվեց 1079 թվականին, հետո հայտնվեցին վարդարանը¹, ինդուլգենցիաների² վաճառքը, հացի և գինու գոյափոխման վարդապետությունը, Քրիստոսի Մարմնի տոնը և այսպես շարունակ, մինչև Մարիամի մարմնավոր համբարձման դոգման: Առաքյալների ժամանակ անգամ խոսք չկար խոստովանարանի մասին: ¹

¹ Երկար համրիչ՝ տերողորմյա, որ գործածում են կաթոլիկները աղոթելիս:

Ցանկության դեպքում ցուցակը կարելի էր շարունակել: Այստեղ հստակորեն պետք է ասենք, որ բոլոր այս դոգմաները ոչ մի ընդհանուր բան չունեն սկզբնական քրիստոնեության և առաքյալների վարդապետության հետ: Ի՞նչ իրավունքով են ներմուծվել դրանք: Ըստ էության յուրաքանչյուր սկզբնական ուսմունք այնպես է փոխվել և այնքան շատ բաներ են ավելացվել, որ այլևս ոչ մի ճշմարիտ բան չի մնացել:

Օրինակ՝ Տերն ասում է. «Եվ երկրիս վրա ոչ մեկին ձեզ «Հայր» չկոչեք, որովհետև ձեր Հայրը մեկն է՝ Նա, որ երկնքում է» (Մատթ.23:9): Ո՞վ կարող է հասկանալ, որ այս խոսքը լիովին անտեսվել է, որովհետև ողջ աշխարհը ընկնում է մի մարդու ոտքերի առջև նրան մեծարելու և պատվելու՝ «սուրբ Հայր» կոչելով: Դրան Տերը պատասխանում է. «Ես իմ փառքը ուրիշին չեմ տա» (Ես. 48:11): Հիսուսը մեզ սովորեցրեց աղոթել ասելով. «Հայր մեր, որ երկնքում ես, թող Քո անունը սուրբ լինի»: Մի՞թե հայիոյություն չէ արհամարհել Աստծո խոսքը և այս անվանումը օգտագործել մարդու համար: Ո՞վ է ուրեմն Սուրբ Հայրը, ում անունը պետք է սուրբ լինի: Երկնքում է, թե՞ երկրի վրա:

Որտե՞ղ է սկզբնական քրիստոնեության մեջ պատմվում Մարիամի հայտնությունների, ուխտավայրերի և սրբերի պաշտամունքի մասին: Գիշտ հակառակը, Աստվածաշունչը մեզ խստորեն զգուշացնում է մեռելների հոգիների հետ կապերի դեմ: Այդպիսի բաները ոգեհարցություն և կախարհություն են: Նաև հովանավորող հոգիների պաշտամունքը լիովին հակասուրբգրային է: Ավելին՝ դա միայն մեկ բան կարող է նշանակել՝ վերադարձ հեթանոսության կուռքերի պաշտամունքին:

Նաև Սուրբ Գրքում չենք գտնում ամենաթեթև ակնարկն այն մասին, որ Մարիամը միջնորդուհի է Աստծո և մարդկանց միջև: Գրված է. «Որովհետև մեկ Աստված կա ու մեկ միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս մարդը» (1 Տիմ. 2:5): Նույնը վերաբերում է բարեխոսուհու դերին, որ վերագրում են նրան: Աստծո խոսքում շատ հստակորեն ասվում է. «...իսկ եթե մեկը մեղանջի, բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս արդարին: Նա քավություն է մեր մեղքերի համար, և ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի» (1 Հովհ.2:1,2):

Նաև Սուրբ Գիրքը մեզ պատմում է միայն Հիսուս Քրիստոսի

² Պապական հրովարտակ մեղքերի թողության մասին, որը վաճառվում է հավատացյալներին:

համբարձման մասին. «Եվ երբ օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից ու երկինք էր բարձրանում» (Ղուկ.24:51): Ոչ մի առաքյալ երբևէ ոչինչ չի իմացել Մարիամի համբարձման մասին: Միայն 1951 թվականին հաստատվեց այս դոգման ըստ այն լեգենդի, թե իբր Մարիամը հոգով և մարմնով երկինք վերցվեց: Դա ոչ մի սուրբգրային հիմք չունի: Մարդկային պատվերները դեռ ոչ ոքի չեն փրկել, հակառակը, միլիոնավոր մարդկանց զրկել են փրկությունից:

Ո Չ Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ա Յ Ի Ն Հ Ա Վ Ա Կ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Սուրբ Գրքում չկա ոչ մի ակնարկ իշխանություն ունեցող մի մարդու մասին, որը Պետրոսի ժառանգորդն է: Ոչ մի տեղ չի խոսվում Քրիստոսի տեղապահի մասին: Սուրբ Գիրքը խոսում է միայն Հիսուս Քրիստոսի հետևորդների մասին: Ոչ էլ գրված է, որ Պետրոսը նշանակվել է որպես եկեղեցու տեսանելի գլուխ: Ինչպե՞ս կարող է որևէ մարդ գլուխ լինել, երբ գլուխը Քրիստոսն է:

Նրա մասին գրված է. «Եվ Նա բոլորից առաջ է, ու ամեն բան Նրանով է հաստատուն: Եվ Նա է Մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը...» (Կողոս. 1:17,18): Նա, ով հավակնում է լինել գլուխ, ինքն իրեն բարձրացնում է Քրիստոսից ավելի և ենթարկվելու է դատապարտության ըստ 2 Թես.2:3,4 համարներում գրված խոսքի: Աստվածաշնչային ձևով Քրիստոսին հավատացող մարդը եկեղեցու գլուխ կճանաչի միայն Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Քրիստոսը երբեք չի հաստատել տեղապահ կամ «Vicarius Filii Dei»: Նա ինքն է փրկել Իր եկեղեցին և տանում է նրան կատարելության:

Հետաքրքիր է եկեղեցու պատմության մեջ հետևել դրա հոգևոր զարգացումներին: Այն լեգենդը, ըստ որի Պետրոսը գործել է որպես Հռոմի եպիսկոպոս և թաղվել է այնտեղ, պատմականորեն չի կարող ապացուցվել: Խոսվել է միայն Սիմոն մոզ անունով մի կախարդի մասին, որն այնպիսի ազդեցություն է թողել Հռոմի սենատի և ժողովրդի վրա, որ նրան աստված են հռչակել և կանգնեցրել նրա արձանը «Simoni dea sancto» մակագրությամբ:

Ուրեմն ի՞նչ կապ ունի այդ հեքիաթը Աստծո մարդ Սիմոն Պետրոսի հետ, որը երբեք Հռոմ ոտք չի դրել: Այս հարցում էլ միայն դիմում ենք Սուրբ Գրքին: Ըստ Գաղատ. 2:9 համարի Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը մի կողմից, Պողոսն ու Բառնաբասը՝ մյուս, միաբանությամբ ձեռք տվեցին իրար՝ ի նշան հաղորդակցության, որ

Պողոսն ու Բառնաբասը գնան հեթանոսների մոտ, իսկ Պետրոսը, Զակոբոսը և Զովհաննեսը գործեն հրեաների մեջ:

Պողոսի մասին խոսում են որպես հեթանոսների առաքյալի, որովհետև հենց դրա համար է Աստված նրան կանչել: Նրան էր Տերն ասել. «Գնա՛, որովհետև ես քեզ հեռու, հեթանոսների մեջ եմ ուղարկելու» (Գործք 22:21): Զոռմի եկեղեցուն Պողոսը գրում է 15-րդ գլխի 28-րդ համարում.«...ծեր միջով Իսպանիա կանցնեմ»: Պողոսի միսիոներական ճամփորդությունները, ներառյալ Զոռմում կատարվածները, մեզ հստակորեն նկարագրված են: Ինչու՞ ուրեմն ոչ մի անգամ չի հիշատակվում այդ քաղաքում կատարած Պետրոսի թեկուզ մեկ ճամփորդության մասին: Պողոսը Զոռմից է ուղարկել եկեղեցիներին, ինչպես նաև անհատներին ուղղված ուղերձների մեծ մասը: Այդ քաղաքում իր հետ գտնվողներից շատերը հիշատակվում են իրենց անուններով, բայց ոչ մի անգամ չի նշվում Պետրոսի անունը: Կարելի՞ է պատկերացնել, որ դա հնարավոր կլիներ, եթե իրոք Պետրոսը իր հետ գործելիս լիներ Զոռմում:

Բացի այդ, այն, թե որտեղ է եղել և ծառայել Աստծո մարդը, քիչ նշանակություն ունի: Պարզապես պետք է բացահայտել այն կրոնական առասպելը, որի վրա մի մեծ հաստատություն է հիմնված, որն էլ այդ հնարանքի միջոցով ուզում է հաստատել իր վարդապետության իշխանությունը: Սրան կարող ենք պատասխանել հենց իր՝ Պետրոս առաքյալի խոսքերով. «Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպելների հետևելով...» (2 Պետր.1:16):

Սուրբ Գիրքը չի խոսում նաև առաքելական հերթագայության մասին: Երբ 440 թվականին Լևոն Մեծը ընտրվեց Զոռմի եպիսկոպոս, առաջ բերեց այն հավակնությունը, թե հռոմեական եպիսկոպոսը գերազանցություն ունի մյուս եպիսկոպոսների հանդեպ: Նա էր, որ այդ առթիվ վկայակոչեց Մատթ. 16:18 համարը: Նա հանդիսավոր կերպով հայտարարեց, որ ինքը Պետրոսի ժառանգորդն է: Մինչ այդ այս գաղափարը ժամանակ առ ժամանակ առաջ էր բերվում «Նիկողայոսյանների» շրջանում, բայց դեռևս կապված չէր որոշակի հոգևոր ծառայության հետ: Դա հավատքի մի ուղղություն էր, որը տարբերություն էր դնում լսող աշխարհականների և ծառայող եղբայրների միջև: Դա լիովին հակառակ է Խոսքին: Փրկագնված եկեղեցին «թագավորական քահանայություն է» (1 Պետր.2:9):

Բոլոր պատմաբանները գիտեն, որ Պոլիկարպը՝ Աստծո այդ օրհնյալ մարդը (155), եղել է Զովհաննեսի՝ Զիսուսի սիրելի աշակերտի հետ, որն աքսորվել էր Պատմոս կղզում: Նա ճշմարիտ վկայությունն

էր ստացել հենց առաքյալի բերանից: Նրա բոլոր շարադրանքներուն ոչ մի անգամ չեն հիշատակվում հետագայում հնարված գաղափարները: Իրենեոսը՝ Աստծո կողմից իշխանություն ստացած Քրիստոսի պատգամաբերը(202), բավական երկար ժամանակ ապրել է Պոլիկարպի հետ: Նա նույնպես երբեք չի հիշատակել Պետրոսի ժառանգորդի մասին: Մինչև այդ ժամանակը մարդիկ փորձում էին հնարավորին չափ կառչած մնալ Աստծո խոսքից: Տերտուլիանոսն (220) ասում էր. «Տիրոջը, ոչ թե ծառային են պատկանում արդարացումն ու դատաստանը»:

Նույնիսկ Նիկիայի տիեզերաժողովի ժամանակ երկու հռետորները՝ Աթանասը և Արիոսը, նման միտք չիշատակեցին: Միայն 445 թվականին Վալենտինիանոս կայսրը հաստատեց Հռոմի եպիսկոպոսի հոգևոր գերագանցությունը ողջ արևմուտքի եկեղեցու նկատմամբ: Այսուհետ ողջ իշխանությունը գալիս էր Հռոմից: Եկեղեցու հանրահայտ վարդապետ Օգոստինոս Հիպոնացին (354-430) նպաստեց այդ մտքի տարածմանը. նա գրեց «Աստծո պետության» մասին: Նրա համար եկեղեցին ներկայացնում էր հազարամյա թագավորությունը: Նա սովորեցնում էր, որ «Եկեղեցին իշխանությունն է»: Ուրեմն որտե՞ղ է մնում Նրա իշխանությունը, ով ասել է. «Ինձ է տրված ողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա»:

Այս ոչ սուրբգրային զարգացումները չեն կարող վերագրվել սկզբնական քրիստոնեության առաքյալներին: Ինչպես արդեն շարադրեցինք, այն ժամանակ կային ծառայություններ, որոնք Տերը հաստատել էր ողջ եկեղեցու համար: Մինչդեռ ամեն տեղական համայնք ուներ պատասխանատու եղբայրներ: Նրանք կոչվում էին «երեց», «վերակացու» կամ «եպիսկոպոս»: Օրինակ՝ փիլիպեցիներին ուղղված թղթում Պողոսը ողջունում է սրբերին և սիրելիներին իրենց եպիսկոպոսների և սարկավագների հետ: Այս երկու ծառայությունները պատկանում են տեղական եկեղեցուն: Այդ առաջադրանքը կատարելու համար սուրբգրային պայմաններից մեկն այն էր, որ այդպիսի մարդը պետք է ամուսնացած լինի (1Տիմ.3:2): Ոչ մի առաքյալից կամ մարգարեից չի պահանջվել, որ նա մեկ կնոջ ամուսին լինի, այլ միայն սարկավագներից և եպիսկոպոսներից: Միայն ամուսնացած մարդը, որը կարողացել է հաղթահարել ընտանեկան պրոբլեմները, կարող է ուրիշներին գործնական խորհուրդներ տալ և օգնել:

Մինչդեռ Աստծո Հոգին արդեն հայտնել էր, ինչպես Պողոսն է ասում, որ դա այդպես չէր մնալու: 1Տիմ. 4-րդ գլխում կարդում ենք. «Հոգին հայտնապես ասում է, որ վերջին ժամանակներում ոմանք հավատքից

կհեռանան և կհետևեն մուլար ոգիների և դևերի ուսմունքների՝ ստախոսների կեղծավորությամբ, որոնց խղճմտանքը խանձված է, որոնք անուսնանալը կարգելեն, կհրաժարվեն ուտելիքներից...»։ Ի՞նչ ենք մտածում այս խոսքերը կարդալով։ Դրանք տառացիորեն կատարվեցին։

Թ Յ Ո Ւ Ր Ի Մ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նա, որ ուշադրությամբ է կարդում Մատթ.16:18 համարը, կնկատի, որ Տերը չի ասել. «Դու Պետրոսն ես, և քեզ վրա ես կկառուցեմ Իմ եկեղեցին»։ Այլ Նա ասաց. «Ես էլ քեզ ասում եմ, որ դու Պետրոս ես, և այդ վեճի վրա Իմ եկեղեցին կկառուցեմ»։ Անթույլատրելի է վերցնել մեկ համար և այն մեկնել կամայականորեն։ Հստակ պատասխան ստանալու համար պետք է կարդալ ողջ համատեքստը։

Թե՛ Հին, թե՛ Նոր Կտակարանում Աստված հաճախ անվանվում է Վեմ։ Բայց ոչ մի անգամ այս բառը չի գործածվել մարդու համար։ Պետրոսը աստվածային հայտնություն էր ստացել Քրիստոսի մասին, բայց մի քանի րոպե հետո պետք է տեսներ իր թերությունը, մեղավոր լինելը։ Մի քանի համար հետո Տերը պետք է ասեր այդ նույն Պետրոսին. «Հեռացիր Ինձնից, սատանա՛, դու ինձ համար գայթակղություն ես, որովհետև դու ոչ թե Աստծո, այլ մարդկանց բաներն ես մտածում»։

Դա պետք է մտածելու տեղիք տար բոլոր նրանց, ովքեր իրենց իրավունք են վերապահում Աստծո Խոսքին տալ իրենց սեփական մեկնությունները։ Այն ամենը, ինչ ներդաշնակ չէ գրված Խոսքի հետ, գալիս է սխալ ներշնչումից։ Այն նույն խոսքերը, որը Տերն այն ժամանակ ասաց Պետրոսին, ով ակնհայտորեն այլևս աստվածային ներշնչման տակ չէր, այլ մարդկային մտքեր էր արտահայտում, Նա այսօր ասում է բոլոր նրանց, ովքեր գտնվում են սխալ ներշնչման տակ։

Հոգևոր ոլորտում կարևորն այն չէ, որ լավ և համոզիչ մտքեր շարադրենք, այլ որ շարադրենք Աստծո հավիտենական միտքը, որը Նա հստակորեն արտահայտել է Իր Խոսքում։ Կա ներշնչման միայն երկու աղբյուր։ Մարդը կամ մի աղբյուրից է օգտվում, կամ մյուսից։ Եղեմի պարտեզում սատանան սկսեց Խոսքի իր սեփական մեկնությունը տալ առաջին մարդուն։ Նախ Եվան լսեց այդ, հետո Ադամն էլ իր հերթին լսեց Եվային։ Այսպես սկսվեցին բոլոր նեղությունները երկրի վրա։ Պետք է պարզ լինի ամեն մարդու համար,

որ սատանան երբեք չի ներկայանա մի հայտարարությամբ, որը ոչ մի կապ չունի Աստծո և Իր Խոսքի հետ: Դա չափազանց աչքի կընկներ: Նա միշտ օգտագործում է Աստծո Խոսքը, միայն այն բերում է կեղծված ձևով: Նա կարողանում է մարդկանց խաբել միայն այն ժամանակ, երբ կարողանում է նրանց հավատացնել, որ իրոք Խոսքը Աստծո գործի մասին է: Ահա թե ինչու բոլոր ժամանակներում բոլոր նրա ասածները բարեպաշտ հնչողություն են ունեցել:

Մեր Տիրոջ փորձության պատմությունից իմանում ենք, որ թշնամին Նրա մոտ եկավ նաև սուրբգրային հատվածներով, որոնք նա անջատել էր համատեքստից և օգտագործում էր սխալ ձևով: Մեր Տերը նրան ամեն անգամ պատասխանում էր ասելով. «Նաև գրված է...»: Այսպիսով, աստվածաշնչյան հատվածների մեջբերումը դեռևս ոչինչ չի նշանակում, եթե դա չի համապատասխանում Սուրբ Գրքի ողջ վկայության հետ: Թեև թշնամին ներկայանում է աստվածաշնչյան հատվածները մեջբերելով, նա դրանցից ոչ մեկը չի թողնում իրենց սկզբնական համատեքստում:

Բ Ա Ն Ա Լ Ի Ն Ե Ր Ը

Մատթ.16:19 համարում գրված այս խոսքը՝ «Ես քեզ երկնքի արքայության բանալիները կտամ», որը Տերն ասաց Պետրոսին, ուղղակի կապ ուներ իր կոչման և իր հանձնարարության հետ: Երբ առաջին եկեղեցին հավաքվել էր Պենտեկոստեի օրը, Պետրոսը ներկայացավ որպես Աստծո պատգամախոս: Սուրբ Հոգով լցված՝ նա մի քանի բառով բացատրեց փրկության հիմնարար ճշմարտությունները: Այդ ճշմարտությունները միշտ պարտադիր են Նոր Կտակարանի հավատացյալների համար:

Բանալին խորհրդանշում է մուտք ինչ-որ բանի մեջ: Եթե մեկն ունի պալատի, տան, մեքենայի բանալին, կարող է մուտք ունենալ այնտեղ. նրա առջև բացվում են փակված դռները, նա կարող է մտնել: Եթե մեկն ունի երկնքի թագավորության բանալիները, երկնքի թագավորությունը բացվում է նրա առաջ իր բոլոր գանձերով, խոստումներով, պարգևներով: Նա պարզապես ազատ մուտք ունի բոլոր բաներում, որ Աստված պատրաստել է: Այն խոսքերով, որ Տերն ասաց Պետրոսին, նա ուզում էր առանձնահատուկ կերպով շեշտել այդ իրականությունը: Նախ այդ աստվածային լիազորությունը մարգարեական ձևով վերաբերում էր մեր Տիրոջը (Ես.22:22):

Հետագայում նա այդ պարզևեց իր ծառաներին, որոնց Նա անձամբ կանչել էր ծառայության:

Մատթ.18:18 համարը նույնպես աղավաղվել և հանվել է համատեքստից: Այստեղ Տերը չի դիմում միայն Պետրոսին, այլ ողջ եկեղեցուն: Դրա համար էլ գրված է հոգնակի թվով. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ. ինչ որ երկրի վրա կապեք, երկնքում էլ կապված կլինի, և ինչ որ երկրի վրա արձակեք, երկնքում էլ արձակված կլինի»: Որտե՞ղ ենք լսում կրոնավորների մասին, որոնք ընդունակ են կապելու սատանայի զորությունները, դևեր հանելու, կապվածներին արձակելու: Յուրաքանչյուրը կարող է իր հագուստից կախված բանալի կրել: Բայց ո՞վ է ստացել Աստծո լիազորությունը:

Հաջորդ համարը նույնպես վկայում է, որ Տերը դիմում է ողջ եկեղեցուն: Ասվում է. «Դարձյալ ճշմարիտ են ասում ձեզ. եթե ձեզանից երկուսը երկրի վրա միաբանվեն, այն ամենը, ինչի համար որ խնդրեն, կլինի Իմ Հորից, որ երկնքում է: Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի Իմ անունով հավաքված լինեն, ես այնտեղ նրանց մեջ եմ»: Անհասկանալի է, թե ինչպես կարող էին եզրակացնել, որ 18-րդ համարը վերաբերում է միայն եկեղեցուն ծառայություն կատարողներին:

Հավատացյալները ճշմարտապես կազմում են Տիրոջ մարմինը և բոլորը հավասար են Աստծո առաջ: Պողոսը գրում է Հռոմի եկեղեցուն. «Որովհետև ինչպես որ մեկ մարմնի մեջ շատ անդամներ ունենք, և այդ բոլոր բաները նույն գործը չունեն, այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք: Միայն թե զանազան պարզևներ ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է...» (Հռոմ. 12:4-6): Կորնթացիներին ուղղված ուղերձի 12-րդ գլխի 4-րդ համարում Պողոսն ավելի խորությամբ է թափանցում այդ մտքի մեջ. «Պարզևները զանազան են, բայց Հոգին նույնն է»: Նա շեշտում է, որ, որպես անդամներ, մենք Սուրբ Հոգով միացած ենք Տիրոջ Մարմնի մեջ: 7-րդ համարից սկսած նա շարադրում է. «Բայց ամեն մեկին Հոգու հայտնությունը օգուտի համար է տրված»: Դա փորձառություն է: Հետո նա շարունակում է՝ թվարկելով Հոգու ինը պարզևները Հիսուս Քրիստոսի Մարմնի անդամների մեջ: 18-րդ համարում ասում է. «Բայց հիմա Աստված անդամները, նրանցից ամեն մեկը դրեց մարմնի մեջ, ինչպես կամեցավ»:

ԱՌԱՔԵԼԱԿԱՆԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքյալները, ինչպես նաև Աստծո կողմից ճշմարտապես ուղարկված մարդիկ չեն իշխել այս աշխարհի գորությունով, այլ եկել են աստվածային լիազորություններով և Սուրբ Հոգու գորությամբ: Միայն Աստծո հանձնարարությամբ տրված Խոսքի քարոզչության հետ կապված էին նրանք գործադրում իշխանություն, որն Աստված Իր գերիշխանությամբ վստահել էր նրանց: Այդ իշխանության իմաստն այն չէր, որ մեկը մյուսի վրա իշխեր, այլ, որ բոլորը խոնարհվեն Աստծո հզոր ձեռքի տակ: Այդ լիազորությունը կախված չէ պաշտոնից, այլ կապված է ամեն բան ընդգրկող Հարուցյալի գորության հետ:

Իր հարությունից հետո Տերն ասաց վերնատանը գտնվող Իր աշակերտներին. «Խաղաղություն ձեզ. ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում»: Հետո ասվում է. «Եվ այս ասելով՝ նրանց վրա փչեց ու ասաց. «Առեք Սուրբ Հոգին: Որոնց մեղքերը որ թողեք (ոչ թե՛ թողես), թողնված կլինի նրանց, որոնցը որ պահեք, պահված կլինեն» (Հովհ.20:21-23): Այս տարբեր խոսքերի միջև կապը նույնպես շատ հստակ է: Այս համապարփակ հանձնարարությունը Տերը տալիս է միայն նրանց, ում ծառայության է վերցրել քարոզչության համար: Ուրեմն ո՞վ կարող է այսօր վկայել, որ Տերն է իրեն կանչել Իր ձայնով, և ինքը Տիրոջից է հանձնարարություն ստացել: Ո՞վ է սկզբից ի վեր ճշմարտապես ներշնչվել Տիրոջ Հոգուց: Ո՞վ ունի իշխանություն գործելու Նրա անունով:

Արդյո՞ք Պետրոսը կամ Պողոսը ընտրվեցին հանձնաժողովի կողմից: Թե՛ Աստված էր նրանց հաստատել: Ոչ մի կարդինալ չկար պապ ընտրելու համար: Չկային ո՛չ ծխի քուլաներ, ո՛չ համաաշխարհային ցնծություն: Սկզբնական քրիստոնեության մեջ Աստծո մարդիկ հասկացել էին, թե ինչ էր Տերը իրենց պատվիրել: Նրանք Սուրբ Հոգու առաջնորդության տակ էին: Որոշակի թեմայի վերաբերող սուրբգրային հատվածները նրանք ճշտությամբ բերում էին ընդհանուր հայտարարի:

Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին իջավ ուժեղ քամու ձայնով և աստվածային կրակով, որը բոցավառեց բոլոր ներկա եղողների լեզուները: Աստվածային կրակով մաքրված՝ նրանք կարողացան Հին Կտակարանի մարգարեների նման հռչակել Խոսքը Սուրբ Հոգու կատարյալ գորությամբ: Այն, ինչ Պետրոսն ասաց իր առաջին քարոզի ժամանակ, մինչև վերջին քարոզը կկրկնեն բոլոր նրանք, ովքեր կանչվել են Տիրոջ կողմից և լցվել Սուրբ Հոգով. «Ապաշխարեցե՛ք

և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար» (Գործք 2:38): Նրանց մասին, ում Տերն Ինքն է ուղարկել, Նա ասում է. «Ձեզ լսողն Ինձ է լսում, ու ձեզ մերժողն Ինձ է մերժում» (Ղուկ.10:16):

Մ Ե Ղ Թ Ե Ր Ի Թ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երբ Տերն այսօր խոսում է մեկի միջոցով, նույն բաներն է ասում, ինչ ասել է երկու հազար տարի առաջ: Ղուկ. 24:47 համարում Քրիստոսի վերաբերյալ գրված է. «Եվ Նրա անունով, Երուսաղեմից սկսած, բոլոր ազգերի մեջ ապաշխարություն ու մեղքերի թողություն քարոզվեր»: Մեղքերի թողությունը կապված չէ որևէ պաշտոնի հետ, այլ միայն խաչյալ Հիսուս Քրիստոսի: Միայն քարոզի ժամանակ է, որ Սուրբ Հոգին ունկնդիրների մեջ կարող է առաջացնել անհրաժեշտ գղջում, տալ հստակություն դարձի գալու համար և միայն այդ կերպ մեղքերի թողություն կշնորհվի նրանց: Դա անձնական փորձառություն է, ոչ թե պաշտոն ունեցող մարդու գործողություն:

Հռոմ.10-րդ գլխում Պողոսը բացատրում է, որ աստվածաշնչյան հավատքը գալիս է լսելուց, իսկ լսելը՝ Աստծո հոսքից: Դրա համար կարևոր է, որ չքարոզվի ինչ պատահի, այլ քարոզի միջուկը կազմեն Քրիստոսը և Նրա Ավետարանը՝ Իր կատարած փրկագնման գործի հետ միասին:

Իսկապես մեզ մտածելու տեղիք պիտի տար, երբ տեսնում ենք, որ մի կողմից մարդկանց թողնում են իրենց մեղքերը ողջ կյանքի ընթացքում և նրանք ներվում են, մյուս կողմից սովորեցնում են, որ մեղքերի քավություն համար պատիժ պետք է կրել: Աստծո հոսքը հակառակն է հաստատում. «Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց» (Եբր.10:14): Հիսուս Քրիստոսի Ավետարանը բարի լուր է, փրկության պատգամ: Եսայի մարգարեն մարգարեացել է ասելով. «Ասե՛ք թուլասիրտներին. <Ուժովցեք, մի վախենաք, ահա ձեր Աստվածը գալիս է... և Նա ձեզ փրկելու է» (Ես.35:4): Պողոս առաքյալը դա հաստատում է այս խոսքերով. «Որովհետև Աստծո շնորհքը երևաց, որ փրկարար է ամեն մարդկանց համար» (Տիտ.2:11): Եսային աղաղակում է. «Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրենությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը նրա վրա եղավ և Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Ես.53:5):

Նա, ով Տիրոջն ընդունել է որպես Փրկչի, չի կարող այլևս պատժվել, որովհետև նա է իր վրա վերցրել մեր պատիժը: Նա, ով հավատում է դրան, ստանում է մեղքերի թողություն և խաղաղություն Աստծո հետ: Պողոսը գրում է. «Արդ մենք, հավատով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրա միջոցով հավատով ընդունել ենք այս շնորհիքի մեջ մտնելն էլ, որի մեջ կանգնած ենք...»(Հռոմ.5:1,2):

Ավելի ուշ առաքյալը գրում է Քրիստոսի վերաբերյալ. «Որով փրկություն ունենք Նրա արյունով՝ մեղքերի թողություն իր շնորհիքի մեծության չափով» (Եփես. 1:7): Ամեն մարդ կարող է մեզ հետ կարգալ Կողոս.1:14 համարը, որտեղ տեսնում ենք, որ փրկագնման գործն ամբողջությամբ կապված է իր՝ Փրկչի հետ: Հռոմ.1:16 համարում Պողոսն ասում է. «Որովհետև ես Քրիստոսի Ավետարանը ամոք չեմ համարում, քանի որ Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի»: Երբեք ավելորդ չէ շեշտել, որ այդ հավատքը կապված է միայն Աստծո Խոսքի հետ: Ամեն մարդ կարող է սովորեցնել այն, ինչ իրեն հաճելի է և շարունակել վկայակոչել Քրիստոսին: Հավատքը պետք է համապատասխան լինի Սուրբ Գրքի հետ:

Սուրբ Գրքում չկան դատարկ խոստումների անորոշ ժամանակի համար, այլ ինչ Տերն Ինքն է ասել, կատարվում է. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ. Իմ Խոսքը լսողը և Ինձ ուղարկողին հավատացողը հավիտենական կյանք ունի և չի դատապարտվի, այլ մահից դեպի կյանք է անցել» (Հովհ.5:24):

Ինչպե՞ս կարող է մեղքերի թողությունը, որն Աստծո շնորհիքի պարգևն է, կախված լինել եկեղեցական գործողությունից: Դա կախված է միայն մարդու հավատքից, որը լսում է Ավետարանը և ընդունում է այն: Գրված է. «Արդ, ուրեմն, ինչպես որ մեկի հանցանքով բոլոր մարդկանց վրա դատապարտություն եկավ, այնպես էլ մեկի արդարությամբ բոլոր մարդկանց վրա կյանքի արդարություն է գալիս» (Հռոմ.5:18):

Ուրեմն որտե՞ղ կարող են դեռ տեղ ունենալ բարի գործերը, որոնք մարդուն մղում են վաստակելու իր փրկությունը: Նա, որ բարեսիրտ է և կարող է բարին գործել, կգործի: Բայց ոչ ոք չի կարող դրանով վաստակել իր փրկությունը: Երբ մեր Տերն աղաղակեց խաչի վրա՝ «Ամեն բան կատարվեց» և մահացավ, մեր փրկությունը մեկընդմիջտ կատարվեց: Պողոսը շարունակում է Հռոմ. 5-րդ գլխում. «Որովհետև ինչպես որ մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավոր եղան, այնպես էլ մեկի հնազանդությամբ շատերը արդար կլինեն» (հ.19):

Որքան որ հաստատ է, որ Ադամով նետվեցինք կորստի, մահվան մեջ, բաժանվեցինք Աստծուց, նույնքան հաստատ է, որ Քրիստոսով փրկված ենք կորստից, մահից անցել ենք հավիտենական կյանքին և հաշտվել Աստծո հետ: Աստված Ինքն է հատուցել վնասները: Պետրոսը հակիրճ կերպով վկայում է. «Եվ էլ ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև երկնքի ներքո մարդկանց տրված ուրիշ անուն էլ չկա, որով հնարավոր լինի մեզ փրկվել» (Գործք 4:12): Այլևս կարիք չկա այս պարզ և հստակ իրականությանը որևէ բան ավելացնել:

Անարդար կլիներ, եթե Աստված թույլ տար, որ մեր հավիտենական փրկությունը կախված լիներ ուրիշ մարդկանց բարեհաճությունից: Աստծո կողմից իշխանություն ստացած պատգամաբերի պարզ առաջադրանքը սա է՝ քարոզի մեջ ունկնդիրներին ցույց տալ, որ ըստ Սուրբ Գրքի, Գողգոթայում մեծ հաշտություն է կայացել Աստծո և մարդկանց միջև:

Սրա հետ կապված քարոզի ժամանակ կարելի է աստվածային իշխանությամբ հայտարարել ունկնդիրներին. «Հավատացեք, որ ձեր մեղքերը ներված են, հավատացեք, որ ձեր պարտքերը մարված են, հավատացեք, որ ձեր պատիժը կրել էՆա»: Նա, ում Աստծո Հոգին Աստծո Խոսքի հիման վրա լուսաբանել է այդ աստվածային իրականությունը, հավիտյան ներված է և կարող է քայլել ազատությամբ: Անշուշտ, ամեն մարդ ինքը պետք է ընդունի այդ իրականությունը և անձամբ ստանա փրկության վստահությունը:

ՆՈՐՍԿԻՉՔ

Ռեֆորմացիայի սկսվելուց քիչ առաջ պատմական զարգացումները հասան իրենց գագաթնակետին: Կարելի է պատկերացնել, թե ինչպես էր կատարվում եկեղեցու և պետության իշխանության համատեղ գործադրումը այդ ժամանակաշրջանում: Այլ կերպ մտածողներին և հավատացողներին դատապարտում էին որպես հերետիկոսների, մեղադրում հերձվածողության մեջ և սպանում ամեն տեսակ հնարքներով: Այստեղ կհիշատակենք միայն XV դարի իսպանական ինկվիզիցիան, ինչպես նաև կախարդուհիների դատերը, որոնցով նրանց դատապարտում էին խարույկի վրա այրվելու: Մտադիր չենք այստեղ մանրամասն քննարկել բազմաթիվ մարդկային վրիպումները: Միայն ուզում ենք ցույց տալ այն հոգևոր զարգացումը, որին ժամանակի ընթացքում հասավ այլասերված քրիստոնեությունը:

Այս հողը հագեցած է արյան շատ հեղեղներով: Ռեֆորմացիայի սկզբից առաջ եղած ամենահայտնի նահատակներից մեկը Յան Յուսն է (1415): Նա իր ձայնը վերջին անգամ բարձրացրեց Կոնստանցայի տիեզերաժողովի ժամանակ, բայց նրան լռեցրին աղաղակներով, և նա նպատակին չհասավ: Նա ծնկի եկավ, աչքերը բարձրացրեց երկինք և հանդարտությամբ լսեց իր դատավճիռը: Յետո աղաղակեց. «Տեր Յիսուս, հանուն Քո ողորմության խնդրում եմ ներել իմ բոլոր թշնամիներին»: Տիեզերաժողովի հայրերը ծիծաղեցին, իսկ նրան տարան խարույկի մոտ:

Մինչդեռ Ռեֆորմացիան, որը շրջադարձ էր սկսել եկեղեցու պատմության մեջ, այլևս չէր կարող կասեցվել: Ավետարանի ճշմարտությունը զորությամբ ճամփա բացեց: Մարտին Լյութերը և շատ ուրիշներ դուրս եկան այն սխալների դեմ, որոնց եկեղեցին հավանություն էր տալիս և նույնիսկ պաշտպանում էր: Ինդուլգենցիաների հայտնի վաճառող Տետցելը նրանցից էր, ովքեր խոսքով և գործով հայիոյում էին Աստծուն: Նա քարոզում էր, որ Պապը բացարձակապես իրավունք ուներ ներելու ողջերի և մեռածների մեղքերը և, որ Պապի թողությունը նույնքան արդյունավետ էր, որքան Քրիստոսի խաչը: Ի թիվս այլոց նա հաստատում էր նաև, որ Պապը ինդուլգենցիայի գինը վճարելու դեպքում կարող էր նույնիսկ ներել նրան, ով մարմնավորապես մեղք կգործեր աստվածամոր դեմ: Բառացիորեն դա նշանակում էր, որ ամեն մարդ կարող էր գործել ամենասարսափելի ոճիրները, և Պապը կներեր նրանց և կտար մեղքերի թողություն, հենց որ դրանը ընկներ գանձանակի մեջ:

Եկեղեցու պատմության մեջ կարդում ենք հետևյալը. «Լյութերը լսեց այն սարսափելի հողվածի մասին, որում այդ անպատկառ վանականը քարոզում էր՝ ասելով, որ ինդուլգենցիաների վաճառքի զորությունը նույն կերպ և նույն զորությամբ է գործում, ինչ, որ՝ Քրիստոսի խաչը, որ ինքը պայմանագիր է կնքել Պետրոս առաքյալի հետ, որ ինքը ավելի շատ հոգիներ է փրկել իր ինդուլգենցիաներով, քան Պետրոսը իր քարոզներով ... նրա քարոզի գործնական հետևանքները մղեցին Լյութերին սկսելու Ռեֆորմացիայի առաջին գործողությունը»: Ինչպես միշտ այս անգամ էլ Աստված օգտագործեց երկրի վրա ապրող մարդու՝ Իր անվան փառքի ու պատվի համար: Կան Աստծո պատգամաբերներ, որոնք ոչ միայն ճանաչված են եկեղեցու պատմության մեջ կարևոր դեր ունենալու համար, այլև Աստծո ծառաներ են, որոնց միջոցով Աստծո թագավորությունում փրկության պատմությունը իրականանում է երկրի վրա:

Այդպիսի մարդկանցից էին Մարտին Լյութերը, Ուլրիխ Ցվինգլին, Ֆիլիպ Մելանխթոնը, Ժան Կալվինը, Ժան Նոքսը և ուրիշ շատեր, որ ապրել են այն ժամանակներում: Դարեր հետո, որոնց ընթացքում մարդկանց արգելված էր Սուրբ Գիրքը կարդալը, Աստծո մարդիկ սկսեցին կարդալ Սուրբ Գիրքը և թարգմանել: Սկզբում Աստվածաշունչը թարգմանվեց 14 լեզուներով, 1600 թվականին կար մոտ 40 թարգմանություն, 1800 թվականին՝ 72, 1900 թվականին՝ 567: 1950 թվականին այն թարգմանված էր ավելի քան հազար հարյուր լեզուներով և բարբառներով: Չնայած ոչնչացման բոլոր փորձերին՝ Աստծո Գիրքը ամենաշատ հրատարակություններն ունեցավ և ամենալայն տարածումը:

Աստված նորից սկսեց խոսել Իր Խոսքի միջոցով, և նորից աստվածաշնչյան ճշմարտությունները սկսեցին կենդանի իրականություն դառնալ հավատացյալների անձնական կյանքում: Մինչդեռ այնտեղ կանգ չառան, այլ ձգտեցին մյուսների համար էլ ավելի մատչելի դարձնել այն, ինչ դարձել էր այնքան մեծ և այնքան թանկագին: Ռեֆորմատորների ունեցած հաջողությունը ավելի բորբոքեց պաշտոնական հոգևորականության դիմադրությունը, որն ուզում էր ամեն գնով խոչընդոտել Աստծո Խոսքի տարածմանը: Դրա հետևանքն այն եղավ, որ այս ուրախ և ազատարար Պատգամը տարածվեց ավելի լայն շրջաններում:

Եկեղեցու պատմությունից երևում է, որ այդ իրադարձություններին մասնակցած մարդկանցից յուրաքանչյուրը կոնկրետ առաջադրանք ուներ կատարելու: Եթե ավելի ուշադիր նայենք, նրանք լրացնում էին իրար իրենց ուսմունքներով, որոնք հատկապես ընդգծում էին: Նորից ընդգծվում էր այն, որ քարոզչության միակ չափանիշն Աստվածաշունչն է: Այսօր ոչ ոք չէր համարձակվի իրերը կոչել իրենց անուններով, ինչպես այդ անում էր Լյութերը: Ուշադրության արժանի է այն, թե ինչպես նա մերկացրեց հակաքրիստոնեությունը: Նա չէր դիմում խաբուսիկ փաստարկներին, այլ միշտ վկայակոչում էր Սուրբ Գիրքը այն չափով, որ նրան բացված էր: Օրինակ, այդպես նա գրեց եկեղեցու բաբելոնյան գերության մասին և ընդգծեց հավատքով արդարացումը, որը մարդը ստանում է շնորհքով՝ ի հակադրություն գործերով արդարացման, որը ոչ ոքի չի կարող փրկել:

Այսօր շատերն այն կարծիքին էին, որ Ռեֆորմացիան անհրաժեշտ էր միայն բարոյական անկման պատճառով և որ արտաքին հանգամանքներն էին առիթ տվել դրան: Թեև այդպիսի իրավիճակ իրոք գոյություն է ունեցել, այդ տեսակետը պետք է հերքվի:

Ռեֆորմացիայի ժամանակ խոսքը ոչ թե բարոյական շտկումների մասին էր, այլ հոգևոր նորոգման: Անհրաժեշտ էր մի նոր սկիզբ: Հոգևոր խնամակալությունը մեկընդմիջտ պետք է հասներ իր վերջին, և նորից պետք է հռչակվեր շնորհքի օրը, փրկության օրը: Մինչդեռ բոլորը պատրաստ չէին հավատալու և գտնելու իրենց տեղը Աստծո կողքին: Չնայած դրան՝ սկիզբ դրվեց հոգևոր նորոգմանը, և եկեղեցու անսահմանափակ, համապարփակ իշխանությունը կոտրվեց:

Այսօր քչերն են հիշում և գիտակցում, թե ինչ գին է վճարվել Աստծո խոսքի ազատ քարոզչության հնարավորություն ունենալու համար: Արյունալի հակառեֆորմացիան ձգտում էր գրեթե բոլոր երկրներում տապալել ռեֆորմացիոն շարժումը, և դա մասամբ հաջողվեց: Ամենից հայտնի են Հոլանդիայում բողոքականների և Ֆրանսիայում հուգենոտների հալածանքը: Սուրբ Բարդուղիմեոսի գիշերվա ընթացքում բազմաթիվ բողոքականների արյուն հեղվեց Փարիզի փողոցներում:

Այն ժամանակ Հռոմի եկեղեցին միաժամանակ գործադրում էր հոգևոր և աշխարհիկ իշխանություն: Իր իշխանության սահմաններում բոլոր գործերը նրա տրամադրության տակ էին: Այս գործերը նորից ու նորից միջամտում էին կրոնական վիճաբանություններին: Ամեն տեղ, ուր Ռեֆորմացիան բռնկվում էր առանձնահատուկ ուժով և սպառնում էր ավելի առաջ գնալ, այնտեղ հայտնվում էր հզոր բանակը: Երբ հոգևոր պայքարը Շվեյցարիայում ծավալվում էր ողջ ուժով, այնտեղ էլ գործեր կանչվեցին: Այդ գործերը պետք է ճնշեին և կասեցնեին Ռեֆորմացիան: Ցյուրիխցի ռեֆորմատորների կողմից եղող մարդիկ հավաքվեցին Ցվինգլիի շուրջը՝ այդ հարձակումներից պաշտպանվելու համար: Նա ինքը քայլում էր առաջին շարքում և նրանց ասում. «Հանձնվեք Տիրոջը, ով կարող է հոգալ մեր և մեր մերձավորների համար: Թող Աստված օգնական լինի մեզ»: Դաժան պայքարի ժամանակ Ցվինգլիին մի քար դիպեց և նա վիրավորվեց գեղարդով: Նա պառկած էր դիակների մեջ և ձեռքերը միացնելով ու աչքերը երկինք բարձրացնելով՝ աղոթեց: Կաթոլիկ զորքի հրամանատարը տեսավ այդ, եկավ նրա մոտ և պահանջեց խոստովանվել: Ցվինգլին մերժեց: Մահացու հարվածը ստանալուց առաջ նա հասցրեց ասել այս խոսքերը. «Դուք կարող եք մարմինը սպանել, բայց ոչ հոգին»:

Թվում էր, որ Գերմանիայում Ռեֆորմացիան պետք է կատարելապես ջախջախվեր հակառեֆորմացիայի կողմից: Շվեդիայի թագավոր Գուստավ-Ադոլֆը իր զորքերով օգնության եկավ Սաքսոնիայի կուրֆյուստին, որը բողոքականների կողմից էր: 1632 թվականի

սեպտեմբերի 17-ին մի վճռորոշ ճակատամարտում հաղթեց: Մինչև ճակատամարտը նա աղոթեց այս խոսքերով. «Ամենակարող Աստված, ումից գալիս է հաղթությունն ու պարտությունը, գթած աչքով նայիր մեզ՝ Քո ծառաներին, որ եկել ենք հեռավոր երկրից՝ պայքարելու ազատության և ճշմարտության՝ Քո սուրբ Ավետարանի համար: Շնորհիր մեզ հաղթանակ հանուն Քո սուրբ անվան: Ամեն»: Երկու ամիս անց 1632 թվականի նոյեմբերի 16-ին նա զոհվեց գերմանական հողի վրա:

Ոչ մի դեպքում չպետք է ընդունել, որ Ավետարանի պաշտպանության և տարածման համար գործադրվեն աշխարհիկ իշխանություն և ռազմական ուժ: Հանուն ճշմարտության պետք է ասենք, որ բողոքականներին ստիպել են հայտնվել այդ իրավիճակում: Չափազանց հեռուն կգնայինք, եթե մանրամասն քննարկեինք հակառեֆորմացիայի ընթացքում եղած բոլոր բախումները, որոնց ժամանակ հազարավոր մարդիկ կորցրին իրենց կյանքը:

Եիզովիտների կարգի հիմնադիր Իգնատիոս Լոյոլան՝ հակառեֆորմացիայի գլխավոր պատասխանատուն, պատմության մեջ մտավ որպես Հռոմի կաթոլիկ եկեղեցու հերոս: Նրան Հռոմի Սուրբ Պետրոս տաճարում գերբնական չափսերի հուշարձան են կանգնեցրել: Նրա ոտքերի մոտ պառկած է մի հրեշ, որի վրա գրված է «Լյութեր» և «Կալվին»: Դրանով ցանկանում էին խորհրդանշական ձևով ներկայացնել «բողոքական հրեշի» նկատմամբ նրա հաղթանակը:

Նա թաղված է Հռոմի «դել Ջեզու» («del Gesu») եկեղեցում շքեղությամբ և ճոխությամբ զարդարված մի զոհասեղանի տակ, որն իրեն է նվիրված: Այնտեղ նույնպես կա այդ խորհրդանշին մնան մի բան՝ նրա դագաղի ամեն կողմում գտնվում են մարմարյա պատկերաքանդակներ, որոնք ներկայացնում են հաղթանակած հավատքն ու հաղթանակած կրոնը, որոնց ոտքերի տակ դրված են գրքեր և հերետիկոսներ, որոնց վրա նույնպես գրված են Լյութերի և Կալվինի անունները: Այս երկու հուշարձանները խոսում են հստակ լեզվով:

Այսօր բողոքական շրջաններում թվում է, թե ոչ ոքի չի մտահոգում սա. ժամանակի ոգով ներշնչված՝ շրջանցում են բոլոր այս բաները և զբաղվում օրվա հոգսերով: Ամենուրեք խոսում են երկխոսության մասին և ձգտում են միության: Իսկ ի՞նչ կասեին Ռեֆորմացիայի նահատակներն ու ջատագովները՝ տեսնելով, թե այսօր ինչպես են լքում Ավետարանի և հավատքի սրբազան արժեքները: Մյուս կողմից այդ զարգացումները բնորոշ են վերջին ժամանակների վերջնական

փուլին:

Ռեֆորմացիայի համար շատ թանկ է վճարվել: Ահա թե ինչու դրա նշանակությունն ու նպատակը չէր կարող լինել այն, որ իր հետևից թողներ միայն ճանաչված պետական եկեղեցիներ կամ տեղական եկեղեցիներ, որոնք տարբեր երկրներում տարբեր են: Առաջին հերթին Ռեֆորմացիան հիմք և ելակետ է դրել հաջորդ բոլոր արթնությունների համար, ընդհուպ մինչև մեր ժամանակների արթնությունը: Եթե այս զորավոր սկիզբը դրված չլիներ, բազմաթիվ ազատ եկեղեցիներն ու քրիստոնեական համայնքներն այսօր գոյություն չէին ունենա: Խոսքը մի ռեֆորմացիայի մասին է, որն անընդհատ զարգանում է և որի նպատակն է Հիսուս Քրիստոսի եկեղեցու վերականգնումը:

Ռեֆորմացիայի ժայթքումը փրկության պատմության մեջ նշանակալից իրադարձություն է եղել: Աստծո Հոգին կյանք և լույս բերեց կրոնի մեռած աշխարհին: Քարոզչության կենտրոնում դրվեց Խոսքը: Այն ժամանակից ի վեր համաշխարհային ճանաչում ունեցող անհատականությունները որոշակի չափով ընդգծել են տարբեր վարդապետություններ: Եթե այդ բոլոր ուսմունքները միացնեինք, կստանայինք ներդաշնակ ամբողջություն:

Անշուշտ, բոլոր ճշմարտությունները չհռչակվեցին միանգամից: Կային այնպիսի վարդապետական կետեր, ինչպիսիք են Երրորդության ուսմունքն ու եռամիասնական ֆորմուլայով մկրտությունը, որոնցից ո՛չ մեկը, ո՛չ մյուսը հիմնված չեն առաքելական-մարգարեական վկայության վրա և որոնք չքննարկվեցին Ռեֆորմացիայի պաշտոնական շարժման կողմից: Ռեֆորմացիան մասամբ իր հետ բերեց ծանր հռոմեական ժառանգություն, որը մինչև այսօր բեռնավորում է բողոքական և անկախ եկեղեցիները:

Երկրորդ փուլի ժամանակ Ջոն Ուեսլին ասպարեզ եկավ, և նրա հետ արթնության ջերմեռանդ բազում քարոզիչներ: Նրանք շեշտը դրեցին հավատացյալ մարդու երկրորդ փորձառության վրա: Ինչպես նախկինում Ռեֆորմացիան շեշտը դրեց արդարացման վրա, որը ստանում են միայն շնորհքով, Հիսուս Քրիստոսի փրկության կատարյալ գործին հավատալով, այնպես էլ այս մարդիկ շեշտեցին այն փաստը, որ հավատացյալ դարձած և շնորհքով արդարացած մարդիկ պետք է ունենան ներքին նվիրման և կատարյալ անձնվիրության փորձառությունը: Աստվածաշունչը այս փորձառությունն անվանում է «սրբացում»: Աստծո ճշմարիտ վախը առաջացրեց հնազանդության տանող հավատք: Աստծո Հոգին էլ ավելի խորությամբ էր թափանցում հավատացյալների սրտերը: Այդ ժամանակ հայտնվեցին մեթոդական

համայնքները և հավատքի ուրիշ ուղղություններ, որոնք որոշակի չափով հիմնված էին այդ աստվածաշնչյան ճշմարտությունների վկայության վրա, բայց տարբեր հայացքներ ունեին վարդապետական մյուս կետերի վերաբերյալ:

Նրանցից հետո հայտնվեց Ջոն Սմիթը և նրա հետ՝ Աստծո կողմից օրհնված ավետարանիչներ: Հավատքով մկրտությունը քարոզվեց առանց զիջումների: Միայն նրանք, ովքեր անձնական որոշում էին ընդունել Քրիստոսի համար և պատրաստ էին Նրան հետևելու, մկրտվում էին ընկղմումով: Այստեղից դուրս եկավ մկրտական եկեղեցին և ուրիշ փոքրիկ խմբավորումներ, որոնք միաբան շեշտում էին հավատացյալների մկրտության կարևորությունը, բայց վարդապետական այլ հարցերում դարձյալ տարբերվում էին:

Առանձին երկրներում հոգևոր զարգացումները տարբեր ընթացք ունեցան: Բողոքական շրջաններում ընդհանրապես շեշտը դնում են փրկության անձնական փորձառության վրա, որի հետ կապված է փրկության վստահությունը: Հանրահայտ հոգևոր ուղղությունների կողքին միշտ եղել են փոքր շարժումներ, որոնք զատվում էին բոլոր կրոնական կազմակերպություններից և շեշտը դնում էին որոշակի աստվածաշնչյան ճշմարտությունների վրա: Մենք պատկանում ենք միայն այնպիսի ուղղություններին, որոնք չնայած տարբեր վարդապետություններին, հոգու փրկությունն ու ազատությունը կապում են միայն Աստծո շնորհքի հետ, որը հայտնվել է Հիսուս Քրիստոսով:

Այնտեղ, ուր առանձնահատուկ հայտնություններ են քարոզում և ասում, որ փրկությունը կախված է դրանցից, աստվածաշնչյան նորոգման շարունակության մասին խոսք չի կարող լինել: Ժամանակակից խմբավորումները դրա բնորոշ օրինակն են: Ազատությունը կախված է միայն Ազատարարից, փրկությունը կախված է միայն Նրանից, ով բերեց այն: Թողությունը գալիս է միայն Նրանից, ով մեզ պարզևեց այն, ոչ թե որևէ ինքնակոչ ուսուցչից կամ առաջնորդից:

Անդադար հայտնվում էին Աստծո կողմից լիազորված մարդիկ, որոնք նորից քարոզում էին հին աստվածաշնչյան ճշմարտությունները և այդպիսով, ավելի մոտենում առաքելական վկայությանը: Այս դարի սկզբին համընդհանուր արթնություն եղավ: Այն, ինչ մինչև այդ ժամանակը միայն առանձին անհատներ էին ճաշակել, սկսեցին ճաշակել աշխարհի բոլոր հավատացյալները: Նրանք, ովքեր արդարության քաղցն ու ծարավն ունեին, հոգևորապես սնվեցին և

հազեցրին իրենց ծարավը: Ամենուր Աստծո Յոգին գործում էր այնպես, ինչպես սկզբնական քրիստոնեության մեջ: Մարդիկ սկսեցին ճաշակել Սուրբ Յոգու լեցունությունը, ինչպես նախկինում ճաշակել էին արդարացումն ու սրբացումը: Յանկարծակի սկսված այս շարժումը հիմնադիր չունի: Աստված Ինքն էր գործում բոլոր մայրցամաքներում: Նույն վկայություններն ենք լսում Ռուսաստանում, Չինաստանում, Ամերիկայում և Եվրոպայում: Աստծո կողմից օրհնված մարդիկ հայտնվեցին այս շարժման ժամանակ:

1906 թվականի օգոստոսի 6-ին Գերմանիա եկավ դոկտոր Ռ. Ա. Թորեյը, որը քարոզում էր Թյուրինգում` Բլանկենբուրգում գտնվող Ավետարանական Միության ամենամյա կոնֆերանսի ժամանակ «Սուրբ Յոգու մկրտությունը» թեմայի վերաբերյալ: Շատ ունկնդիրներ խորապես հուզվեցին, որոնց թվում էր գեներալ-լեյտենանտ ֆոն Վիեհբանը: 1907 թվականին այդ եկեղեցական շարժման առաջնորդող եղբայրները հավաքվեցին շաբաթական կոնֆերանսի համար: Յրատապ թեման հետևյալն էր. «Արդյո՞ք առաջին քրիստոնեական համայնքը վշտացրել է Սուրբ Յոգուն»: Երկար բանավեճից հետո հովիվ Շտոկմայերը վեր կացավ և աղաղակեց մարգարեի նման. «Եղբայրներ, մենք վիճում ենք իմանալու համար, թե արդյոք սկզբնական քրիստոնեությունը վշտացրել է Սուրբ Յոգուն: Այստեղ հավաքվածներին շատ ավելի կարևոր հարց են տալիս. «Վշտացրե՞լ ենք մենք Սուրբ Յոգուն»: Այս խոսքերը կայծակի նման հարվածեցին նրանց, և շատերը ծնկի եկան և խոնարհվեցին Աստծո առջև:

Ողջ աշխարհում շատերը ճաշակեցին Աստծո ողորմալից այցելությունը: Եթե չլինեին Օսլոյի երկու «մարգարեուհիները», Կասելում իր ժամանակին չէր լինի Յոգու պարզաների ամմիտ չարաշահումը: Այս զարգացումը, որն անվանեցին հոգեգալստական շարժում, հավատքի տարբեր ուղղություններ ուներ: Այնտեղ, ուր մկրտական քարոզիչներն էին լցվում Սուրբ Յոգով, բնականաբար մկրտում էին միայն հավատացյալներին: Այնտեղ, ուր Սուրբ Յոգին իջնում էր յուրթերական հովիվների վրա, դեռևս շարունակում էին ջրցանման միջոցով մկրտել մանուկներին: Դեռևս հստակ անցում չկար դեպի սկզբնական քրիստոնեությունը, բայց սկիզբն արդեն դրված էր: Տարբեր ոչ սուրբգրային ուսմունքներ ընդունվեցին առանց քննվելու և պահպանվեցին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ասպարեզում հայտնվեց մկրտական քարոզիչ Ուիլյամ Բրանհամը, որը Պոդոսի նման արտասովոր կոչում էր ստացել ծառայության համար: 1933 թվականին

իր առաջին ավետարանչական արշավի ժամանակ մոտ 4000 հոգու ուղեկցությամբ գնաց Օհայո գետի մոտ՝ մոտ 500 հավատացյալների այնտեղ մկրտելու համար: Երբ նա պատրաստվում էր մկրտելու 17-րդ մարդուն, ինչ-որ արտասովոր բան կատարվեց: Մի փայլուն լույս հայտնվեց ամպերի միջից և բոլորի աչքի առջև իջավ Աստծո երիտասարդ ծառայի վրա: Այդ գերբնական կրակի սյունի միջից դուրս եկավ մի զորավոր ձայն, որն ասում էր. «Ինչպես Յովհաննես Սկրտիչն ուղարկվեց պատրաստելու համար Քրիստոսի առաջին գալուստը, այնպես էլ դու կուղարկվես մի պատգամով, որը կպատրաստի Քրիստոսի երկրորդ գալուստը»: Դա տեղի ունեցավ 1933 թվականի հունիսի 11-ին ժամը երկուսին մոտ: Այդպիսի արտասովոր կոչմանն անխուսափելիորեն պետք է հետևեր արտասովոր ծառայություն:

Այստեղ կարող ենք խոսել փրկության պատմության համար կարևոր հանձնարարության մասին: Երկրորդ համաշխարհային պատերազմը, որին մասնակցել էր մոտ 50 ազգ և որը պահանջել էր 50 միլիոնից ավելի զոհեր, անսահման տառապանքներ էր պատճառել միլիոնավոր փախստականների և իր հետևից թողել ավերակներ և կոտորած սրտեր: Այն ժամանակ՝ 1946 թվականի մայիսին դեռ ոչ ոք չէր լսել Բիլլի Գրեհեմի, Օրալ Ռոբերտսի կամ հետագայում ճանաչում ստացած ավետարանիչներից որևէ մեկի մասին: Առաքելական լիազորություն ունեցող Բրանհամի ծառայությունը հարյուրավոր քարոզիչների համար ներշնչման աղբյուր դարձավ: Թեև նրանցից ոչ մեկը անմիջական կոչում և հանձնարարություն չստացավ, ինչպես Բրանհամ եղբայրը, այնուամենայնիվ նրանք իրենց բաժինն ունեցան այս սերնդին Ավետարանը հաղորդելու մեջ: Բառացիորեն միլիոնավոր մարդիկ այսպիսով լսեցին Լրիվ Ավետարանը ավետարանչական արշավների ժամանակ կամ ռադիոյով ու հեռուստատեսությամբ:

Վճռական անցումը տեղի ունեցավ 1946-1949 թվականներին: Բնօրինակ Ավետարանի քարոզչությունը հասավ զանգվածներին: Լրիվ Ավետարանի համայնքները բացեցին իրենց դռները, և նորադարձների մեծ հոսք եղավ: Լինում էին 10.000-ից ավելի այցելուներ: Ավետարանչության համար օգտագործում էին մեծ դահլիճները, մարզադահլիճները և ձիարշավարանները, որովհետև Յնդկաստանում և Հարավային Աֆրիկայում մասնակիցների թիվը անցնում էր 500.000-ից: Կարծես մակընթացության մեջ ընկած ավետարանիչները սկսեցին անցկացնել իրենց սեփական ավետարանչական արշավները: Տեխնիկական առաջընթացի ժամանակաշրջանում արթնությունը սկսեց տարածվել ինչպես երբեք: Նույնիսկ Լրիվ Ավետարանի գործարարների միջազգային միությունը

և խարիզմատիկ շարժումը ուղղակի կամ անուղղակի կերպով այնտեղից են սկիզբ առել: Այս հոգևոր շարժումներից յուրաքանչյուրը իր սեփական գործն է առաջ տանում և ընդգրկում է ունկնդիրների որոշակի խավ: Խարիզմատիկ շարժումը թափանցել է նաև Հռոմի կաթոլիկ եկեղեցին, ինչպես նաև բոլոր հարանվանություններն ու ազատ եկեղեցիները:

Ամեն դեպքում այժմ խոսքը Հոգու գործողության մասին է, որն ընդգրկում է ողջ հոգևոր աշխարհը: Դա կվերջանա նրանով, որ սկզբնական քարոզչությունը կգրավի իր տեղը: Հոգևոր ապրումները լավ են, և Հոգու պարզեցումը կարող են օրհնություն բերել, բայց միայն այնտեղ, ուր ճշմարտության Խոսքն է քարոզվում և ընդունվում որպես աստվածային սերմ, Աստծո Հոգին իրապես կարող է նոր կյանք բերել:

Ըստ Հովել մարգարեի միջոցով տրված խոստման Հոգին իջնում է ամեն մարմնի վրա: Դա կարող է համեմատվել անձրևի հետ: Բայց եթե նախօրոք Խոսքի սերմը չի ցանվել սրտի հողում, նույնիսկ հորդ անձրևը ոչ մի օգուտ չի տա: Միայն մարդիկ կթրջվեն առանց ստանալու որևէ մնայուն բան, իսկ մենք դրան ենք հասնում: Սկզբում էր Խոսքը, ոչ թե մեկնությունը, վերջում էլ այդպես կլինի: Կարևոր է, որ մարդիկ իրենց հոգու մեջ ստանան Աստծո մաքուր Խոսքը՝ որպես աստվածային սերմ: Միայն այդ ժամանակ Սուրբ Հոգին կբերի աստվածային կյանք: Միայն այսպես մարդը կարող է վերստին ծնվել (Հովի. 3, Հակոբ 1:18, 1 Պետր. 1:23):

Լավագույն օրինակը, որ կարող ենք գտնել, մեզ ցույց է տրվում Նոր Կտակարանի սկզբում: 4000 տարի շարունակ մարդիկ սպասում էին Մեսիայի գալստին: Երբ ժամանակը եկավ, խոստումի Խոսքը եկավ Մարիամի մոտ, ով այն ընդունեց, հավատաց և Սուրբ Հոգին հովանի եղավ նրան: Այսպես Խոսքը մարմին դարձավ մարդկային կերպարանքում: Նույն կերպ մենք պետք է ընդունենք Աստծո խոստումի Խոսքը, որ սահմանված է մեզ համար: Միայն այդ ժամանակ Սուրբ Հոգին կարող է այն իրականություն դարձնել մեր մեջ: Լեռան քարոզում Տերն ասում է. «Որովհետև Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա ու անձրև է բերում արդարների ու անիրավների վրա» (Մատթ.5:45): Նույն հողատարածքում գտնվում են ցորենն ու որոմը: Երկուսն էլ ստանում են նույն անձրևը և լուսավորվում նույն արևով: Նույն անձրևը ջրում է տարբեր սերմեր: Այս մտքի մասին խոսվում է նաև Եբր.6:7,8 համարներում: Ամեն սերմ պտուղ է տալիս իր տեսակի պես: Սուրբ Հոգու գործողության վրա հիմնված կոչումը բավական չէ Աստծո թագավորություն մտնելու համար: Մատթ. 7:21 համարում

Տերը մերժում է հենց նրանց, ովքեր զորավոր պարզևներ են գործածել. «ես ձեզ երբեք չեմ ճանաչել»: Խոսքը և Հոգին միասին են գործում: Այժմ Խոսք-Սերունդ պետք է ցանվի և կենդանանա բոլորի մեջ Սուրբ Հոգով: Միայն այսպես կարող է ծնվել աստվածաշնչյան համայնքը, եթե պատրաստ է Հոգով առաջնորդվել Խոսքի ողջ ճշմարտության մեջ: Նախ պետք է լինի ուսուցումը, Խոսքը պետք է ցանվի սրտերում, հետո միայն կարող ենք բերքը հավաքել:

Մենք շարադրեցինք, թե ինչ շեղումներ են տեղի ունեցել Եկեղեցու պատմության ընթացքում և ցույց տվեցինք նաև, որ Ռեֆորմացիայի ժամանակներից ի վեր հոգևոր զարգացումները մեզ վերադարձնում են դեպի սկզբնական քրիստոնեություն: Մինչդեռ ամենուրեք զիջումների են գնում: Յուրաքանչյուրը հավատում է իր ուզած բաներին և չի հավատում այն բաներին, որոնց չի ուզում հավատալ: Այդքանից հետո շատերն ուրախությամբ վկայում են, որ ստացել են Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին ճշմարտության Հոգին է և Նա չի կամենա համամիտ լինել քրիստոնյաների կողմից ընդունված սխալների հետ: Անհրաժեշտ է լիովին վերադառնալ սկզբնական Խոսքին: Առաջին հերթին պետք է բացահայտել, թե ինչպես է զարգացել սխալը, որպեսզի հետո կարողանանք կատարել շտկումները: Այժմ ողջ հոգևոր աշխարհի համար եկել է որոշման ժամը: Ոմանք կվերադառնան հին եկեղեցին, մյուսները՝ ընտրյալների փոքր խումբը, կճաշակեն Խոսքի խոստումների իրականացումը:

Բոլոր նրանք, ովքեր իրենց քարոզչության մեջ պաշտպանում են Հռոմի եկեղեցուց եկած ավանդական մտքերը, նույնպես կվերադառնան այնտեղ: Իրականում Ռեֆորմացիայի ժամանակներից ի վեր Հռոմի եկեղեցու հետ հոգևոր կապերը լիովին չեն խզվել: Եղել են միայն անհատներ, որոնք հետևել են Աստծո կանչին, հետևաբար ընդունել են աստվածաշնչյան ճշմարտությունները և մերժել հակասուրբգրային անճշտությունները: Ինչպես կտեսնենք, չնայած բողոքական համայնքների ինքնուրույնությանը, մնացել են ուսմունքներ, որոնք չեն համապատասխանում Աստվածաշնչին:

Ուշագրավ է այն, որ երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր նկատելի են միության և խաղաղության համար արված ջանքերը: Պատմական թշնամիները բարեկամացել են: Նույնը վերաբերում է ազգերին և եկեղեցիներին: Մի կողմից ունենք քաղաքական միությունը՝ ՄԱԿը (հիմնադրման հրովարտակը ստորագրվել է Սան Ֆրանցիսկոյում 50 ազգերի կողմից 1945 թվականի հոկտեմբերի 24-ին), մյուս կողմից տեսնում ենք Եկեղեցիների համաշխարհային

խորհուրդը, որը հիմնվել է 1948 թվականին, Ամստերդամում: Գրեթե բոլոր ազգերը (այսօր 150 ազգ) պատկանում են Միավորված ազգերին, և գրեթե բոլոր քրիստոնեական եկեղեցիները միավորված են եկեղեցիների խորհրդում: Մեր ուշադրությունն ուղղված է կրոնական զարգացումներին: 1948 թվականին 135 բողոքական հարանվանություններ միացան եկեղեցիների խորհրդում, 1968 թվականին կար 234 հարանվանություն, իսկ հիմա՝ մոտ երեք հարյուր:

Սկզբում եկեղեցիների խորհուրդը իրոք բողոքական միություն էր, և ճանաչված չէր Վատիկանի կողմից: 1960 թվականին Յովհաննես XXIII Պապը շոունում հաստատեց «Քարտուղարություն քրիստոնյաների միության համար»: Վատիկանի երկրորդ տիեզերաժողովի ժամանակ 1962-1965 թվականներին հռչակվեց էկումենիզմի վերաբերյալ դեկրետը: Առաջին պաշտոնական շփումը տեղի ունեցավ եկեղեցիների համաշխարհային խորհրդի կոնֆերանսի ժամանակ, 1968 թվականի հուլիսին, Շվեդիայի Ուպսալա քաղաքում, երբ Վատիկանի 15 ներկայացուցիչներ ներկա էին որպես դիտորդներ: 1969 թվականին Պողոս VI Պապը այցելեց ժնևում գտնվող եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր նստավայրը: 1984 թվականին Յովհաննես-Պողոս II Պապը ճանապարհորդեց Շվեյցարիայում և նույնպես այցելեց եկեղեցիների համաշխարհային խորհուրդ:

Անշուշտ, շատերը ցնցված կլինեն այն փաստից, որ վաղուց բողոքականներն այլևս չեն բողոքում: Ո՞վ է այսօր ուզում դեռևս հոգևոր բանավեճեր ունենալ: Նույնիսկ անկախ եկեղեցիները, որոնք հիսուն, քառասուն, երեսուն տարի առաջ մասամբ մերժում էին միանալ նրանց, միևնույն ժամանակ ուրախանում էին փոխադարձ ճանաչման համար: Դրանց մեծ մասը հասարակական իրավունքի հաստատություններ են, և իրենց ներկայացուցիչները նրանց հետ նստում են կանաչ սեղանի շուրջը: Ուրիշ ի՞նչ է պակասում: «Միություն» բառը կախարդական նշանակություն է ձեռք բերել, «խաղաղություն» բառը ամենուրեք գրվում է մեծ տառերով, «ապահովություն» հասկացությունը բոլորի ցանկությունն է: Այդպես են հանգստացնում հոգիները:

Այսօր էլ Մարտին Լյութերը կասեր այն, ինչ ասել է առաջ. «Անիծյալ լինի այն միությունը, որը ձեռք է բերվում ճշմարտության գնով»: Նա, ով մեկ է Քրիստոսի հետ, մեկ է նաև Իր Խոսքի հետ: Նա, ով համաձայն է հակաքրիստոսի հետ, միանում է նրան: Մտածենք Մատթ.16:25 համարում Տիրոջ ասած այս խոսքերի մասին. «Որովհետև ով որ Իր անձը փրկել ուզի, կկորցնի այն, իսկ ով որ իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի այն»: Ճշմարտության ժամը եկել է, և ամեն մարդ ստիպված

կլիմի որոշում ընդունելու: Մեծամասնությունը ուրախությամբ կողջունի հակաքրիստոսին առանց այդ գիտակցելու: Միայն ճշմարիտ հավատացյալների մի փոքր խումբ հավատարիմ կմնա Քրիստոսին և Նրա Խոսքին: Հնչում է Բաբելոնից, ամեն կրոնական խառնաշփոթությունից դուրս գալու և բաժանվելու կոչը: Այս կանչը լուրջ չեն ընդունի քրիստոնեական կազմակերպությունները, այլ միայն նրանք, ովքեր լուսավորվել են Աստծո Հոգով:

Արևմուտքի քրիստոնեական երկրներում անշուշտ շատ քրիստոնյաներ կան: Մենք քրիստոնեական հասարակություն ենք, ունենք քրիստոնեական կուսակցություններ, միություններ, արհմիություններ և քրիստոնեական մշակույթի հարուստ ավանդույթներ: Մնում է հարցնել, թե մարդիկ արդյո՞ք Քրիստոսին չեն շփոթել հակաքրիստոսի հետ, Աստծուն՝ սատանայի հետ: «Anti» (գերմաներենում և մի շարք լեզուներում՝ «Antichrist») հակաքրիստոս. ծան. թարգմ.) նշանակում է հակառակ. այն, ինչ հակառակ է Քրիստոսին և Նրա վարդապետությանը, հակաքրիստոսից է: Ռ՞վ կարող է դեռևս զանազանել Աստծո հանդեպ պաշտամունքը կռապաշտությունից: Ռ՞վ կարող է զանազանել հավատքը սնահավատությունից:

Աստծո Խոսքին նվիրված մարդիկ մեծ ուշադրություն են դարձնում, երբ լսում են «խաղաղություն և ապահովություն» լոզունգները, որովհետև բառացիորեն գրված է հետևյալը. «Որովհետև երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ նրանց վրա կորուստը կհասնի, ինչպես ցավը՝ հղիի վրա, ու նրանք չեն ազատվի» (1 Թես.5:3): Ամեն ինչ կատարվում է հենց այնպես, ինչպես նախօրոք ասվել էր վերջին ընթացքի մասին: Այն մասին, թե որքան առաջ է գնացել ժամանակը, գիտեն նաև քաղաքական գործիչները: Օրինակ, Միացյալ Նահանգների նախագահը 1985 թվականի հունվարի 20-ին ասաց. «Ես վախենում եմ, որ շուտով կհասնենք Արմագեդոնին»: Այդ ասելով նա նկատի ուներ վերջին մեծ ճակատամարտը, որը հիշատակվում է Հայտն.13:12-16 համարներում: Դրանից կարճ ժամանակ առաջ մի հայտնի սենատոր արտահայտվել էր այսպես. «Մենք առաջին սերունդն ենք, որը գիտի, որ ինքը վերջինն է»: Նրանք, ովքեր դեր ունեն խաղալու, այժմ բարձրանում են համաշխարհային բեմ:

Վերջում այս սերունդը կտեսնի մեծ «հրաշքը», մի անակնկալ, որ երբեք չի եղել և ապագայում չի կրկնվի: Քաղաքականությունը, տնտեսությունը և կրոնական իշխանությունը մի կարճ ժամանակով կիշխեն աշխարհի վրա, որովհետև հակաքրիստոսը, որը

միաժամանակ սուտ մարգարեն է, այս իշխանությունը կդնի նրանց տրամադրության տակ: Արևելքն ու արևմուտքը մեկ միջնորդ կունենան, որը խաղաղություն կհաստատի: Վերջին համաշխարհային իշխանությունը կլինի Միավորված Եվրոպան՝ ըստ հին հռոմեական կայսրության օրինակի: Աստվածաշնչյան մարգարեությունը շուտով կհասնի իր գագաթնակետին:

Համընդհանուր ոչնչացման վախը ճնշում է երկու կողմերին, և դրա համար է, որ ջանք են անում խաղաղության և զինաթափման վերաբերյալ կոնֆերանսներ անցկացնելու համար: Միաժամանակ սպառազինության արտադրությունը զարգանում է ամբողջ թափով, նույնիսկ քննարկում են ողջ տիեզերքը ապագա պատերազմում ընդգրկելու հնարավորությունը: Ինչպես կարելի է եզրակացնել զանգվածային լրատվամիջոցներից, 1985 թվականի հունվարի 21-ից 24-ը Վատիկանում տեղի է ունեցել կոնֆերանս տիեզերքի սպառազինման վերաբերյալ ամերիկյան նախագահի ծրագրերի մասին. դրան մասնակցել են նաև սովետական գիտնականները: Բոլոր այս բաները կատարվում են, որովհետև դրանց համար նախատեսված ժամանակը եկել է: 2 Պետր.3-րդ գլխում առաքյալը խոսում է վերջին ժամանակների մասին և այն ժամանակ արդեն գրում էր. «Եվ այժմյան երկինքն ու երկիրը նույն խոսքով կրակի համար պահպանված պահվում են դատաստանի և ամբարիշտ մարդկանց կորստյան օրվան... Բայց Տիրոջ օրը (գիշերվա) գողի պես կգա. այն ժամանակ երկինքը շառաչյունով կանցնի, և տարրերը կրակով վառված կհավլեն, և աշխարհն ու նրա վրա եղած բաներն էլ կայրվեն... Բայց Նրա խոստման համաձայն՝ նոր երկնքի ու նոր երկրի ենք սպասում, որոնց մեջ արդարություն է բնակվում»:

Ողջ աշխարհի ընդհանուր տնտեսական վիճակը մղում է համագործակցության: Ամեն մարդ ուզում է ապրել, ահա թե ինչու բոլորը պետք է մասնակցեն: Նա, ով չի ենթարկվի այս վերջին համաշխարհային կարգին, բոյկոտի կենթարկվի և կվտարվի միջազգային առևտրից: Այսպես կկատարվի այն, ինչ գրված է՝ որ չեն կարողանա գնել կամ վաճառել (Հայտն.13:17):

Անկախ ցանկացած աշխարհայացքից և հասարակական կարգից, բոլոր ժողովուրդները ստիպված կլինեն խոնարհվել այդ վերջին համաշխարհային իշխանության առջև: Նա, ով չենթարկվի այդ իշխանությանը, ապրելու հույս չի ունենա: Անկախ նրանից, թե համաշխարհային հասարակայնությունը գիտակցում է այդ, թե ոչ, այս բոլոր իրադարձությունները մեզ տանում են հայտնության վերջին

փուլ: Մենք վերջին ժամանակների մարգարեության իրականացման եռուն շրջանում ենք:

Ներկա զարգացումները պետք է քննարկվեն մարգարեական տեսանկյունից, որովհետև ժամանակների նշանները շատ հստակ լեզվով են խոսում: Կարող ենք ասել առանց սխալվելու վախի՝ նա, ով գիտի Աստվածաշունչը, գիտի ապագան: Այն բանից հետո, երբ մարդիկ երկար ժամանակ փորձել են ազդել Խոսքի վրա, ժամանակն է թողնել, որ Աստված խոսի:

Մատենագիտություն

Encyclopaedia Britannica

HAUSS F.: Vater der Christenheit

HERZOG Dr. J.J.: Abriss der Kirchengeschichte

HISLOP A.: The Two Babylons

KING L.J.: House of Death

KOSEL VERLAG: Grundriss des Glaubens

LILJE Dr. Dr. H.: Die Lehre der zwölf Apostel

OEHNINGER F.: Geschichte des Christentums

PATMOS-VERLAG: Kleiner katholischer Katechismus

ROGGE B.: Das Evangelium in der Verfolgung

SCHMIDT K.D.: Grundriss der Kirchengeschichte

STANDRIDGE W.C.: What's happening in the Roman Church?

STEINER L.: Mit folgenden Zeichen

WOODROW R.: Babylon, Mystery, Religion

